

15
9-91

ԷԼԴԱ ԳՐԻՆ



ԽԱՌՆՎԱԾՔ

Դասախոսության տեքստ

ԵՐԵՎԱՆ 2002

15
- 91

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԷԼԴԱ ԳՐԻՆ

ԽԱՌՆԿԱԾՔ

Դասախոսություն

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2002

Խմբագիր Ս. ԱՄԻՐՅԱՆ

Սույն դասախոսությունը նվիրված է խառնվածքին, որն իրենից ներկայացնում է անձի դինամիկ առանձնահատկությունների բնութագիրը: Դասախոսությունում քննարկվում են խառնվածքի ֆիզիոլոգիական հիմունքները, ներկայացվում են դրան բնութագրող տարբեր տեսություններ, ինչպես նաև վերլուծվում են խնդրո առարկայի այն հատկությունները, որոնք կարող են և՛ նպաստել, և՛ հակադրվել անձի որոշակի գծերի ձևավորմանը:

Դասախոսությունը քննարկում է նաև խառնվածքի տարբեր դրսևորումները՝ ամենազանազան հանգամանքներում:

ԵՄՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека ЕГУ

187260

200086907A

Խ Ա Ռ Ն Վ Ա Ծ Ք

Մարդու անհատականությունը, նրա բնագիտական հիմքերը, սոցիալական բնույթը և դրսևորումները առօրյա կյանքում հետաքրքրություն են ներկայացնում, ըստ էության, յուրաքանչյուրի համար, ով այսպես թե այնպես ներգրավված է կոլեկտիվ աշխատանքի մեջ: Անհատականության հիմնահարցը մեծապես հետաքրքրում է և՛ ծնողներին, և՛ մանկավարժ-դաստիարակներին, և՛ բուհերի դասախոսներին, և՛ արտադրական կոլեկտիվների ղեկավարներին, և՛ իրավաբաններին, և՛ բժիշկ-հոգեմկրուլոգներին ու հոգեբույժներին: Կարճ ասած՝ այն հետաքրքրում է մեզ բոլորին:

Մարդու անհատականությունը (այսինքն՝ այն, ինչը տարբերում է տվյալ մարդուն ուրիշներից, և նրան դարձնում յուրովի) որոշելու համար մենք օգտագործում ենք «խառնվածք», «բնավորություն», «անձ» հասկացությունները: Այս հասկացությունների մեջ ի սկզբանե պարունակվում է ներքին բարդ դիալեկտիկա: Յուրաքանչյուր մարդու մոտ, իր անկրկնելիության, եզակիության հետ մեկտեղ, կան նաև գծեր, որոնք ընդհանուր են ուրիշ մարդկանց հետ, հակառակ դեպքում յուրաքանչյուր դասակարգում, ինչպես նաև վերը թվարկած հասկացությունների օգտագործում, կկորցներ իր իմաստը: «խառնվածք», «բնավորություն», «անձ» տերմինները օգտագործվում են մշտապես և ամենուրեք, և կատարում են իրենց դերը: Առօրյա շփումների ժամանակ դրանց յուրաքանչյուրի մեջ որոշակի իմաստ է դրվում, որի միջոցով էլ մարդիկ հասնում են փոխըմբռնման:

Մարդու ինչպիսի՞ գծեր, կողմեր, հատկություններ, առանձնահատկություններ է արտացոլում այս հասկացություններից յուրաքանչյուրը: «խառնվածք», «բնավորություն», «անձ» հասկացությունների սահմանումը կարելի է գտնել ցանկացած բացատրական բառարանում:

Խառնվածքը՝ անհատի բնութագիրն է ըստ հոգեկան գործունեության դինամիկ առանձնահատկությունների, այսինքն՝ խառնվածքի, առանձին հոգեկան գործընթացների ու վիճակների ինտենսիվության: Խառնվածքի կառուցվածքում կարելի է առանձնացնել

երեք հիմնական բաղադրամաս. անհատի ընդհանուր ակտիվություն, դրա շարժիչ դրսևորումներ և հուզականություն¹: Իսկ ի՞նչ է բնավորությունը: Բնավորությունը՝ «մարդու հոգեկան կյանքի ամբողջական և կայուն անհատական կերտվածքն է, նրա տիպը..., որը դրսևորվում է հոգեկան կյանքի առանձին իրավիճակներում, ինչպես նաև մարդու պահվածքում, սովորություններում և մարդու համար բնորոշ բանական ու հուզական կյանքի այլ շրջանակներում: Մարդու բնավորությունը նրա վարքի հիմքն է ...»²: Կարող է թվալ, թե խառնվածքի և բնավորության սահմանումները գործնականում համընկնում են, մինչդեռ առօրյա կյանքում մենք հազիվ թե շփոթենք մարդու խառնվածքը նրա բնավորության հետ: Բնավորությունը մենք կարող ենք անվանել թեթև, ծանր, համակերպվող, պինդ, թույլ, փափուկ, ուժեղ, դաժան, համառ, անհանդուրժելի և այլն: Խառնվածքը բնութագրելու համար հնարավոր բնութագրումները շատ ավելի քիչ են՝ հախուռն, սառը, անսաստ, անաշխույժ. Ինտուիտիվ կերպով մենք զգում ենք տարբերությունը: Խառնվածքի և բնավորության յուրահատկությունը հուշում է, որ այդ տարբերության հիմքում ընկած են անհատականության էականորեն տարբեր դրսևորումներ:

Խառնվածքում առավելապես արտահայտվում է մարդու *վերաբերմունքը* նրա շուրջը կատարվող իրադարձությունների նկատմամբ: Դանիացի նկարիչ Յ. Բիդստրոմը իր երգիծական նկարներից մեկում պատկերել է չորս անձանց ռեակցիան նույն դեպքին՝ մի անձանոթ անցորդ, ոչ դիտավորյալ նստում է նստարանին հանգստացող պարոնի գլխարկի վրա: Յետևանքում խոլերիկը սաստիկ զայրանում է, մելանխոլիկը՝ անչափ վշտանում, սանգվինիկը՝ ծիծաղում, իսկ ֆլեգմատիկը հանգիստ, կարծես ոչինչ չի պատահել, գլխարկը դնում է իր գլխին (տե՛ս հավելվածի 5-րդ խնդիրը):

Բնավորությունները բացահայտվում են գործողության մեջ՝ ակտիվ, նպատակասլաց, անվճռական, հնազանդ-ընդօրինակող և այլն: Ըստ որում ընդհանուր ո՛չ խառնվածքը, ո՛չ բնավորությունը, մեզ ոչինչ չեն ասում տվյալ մարդու սոցիալական արժեքի մասին:

Մարդու սոցիալական հատկությունները բացահայտվում են նրա անձի մեջ, քանի որ անձը՝ «սոցիալապես կարևոր գծերի կայուն

¹ БСЭ, 3-е изд., 1976, т. 25, с. 415.

² Там же, 1978, т. 28, с. 193.

համակարգ է, որը բնութագրում է անհատին որպես այս կամ այն հասարակության կամ ընդհանրության անդամի»³: Անձը ներառում է իր մեջ և՛ մարդու խառնվածքը, և՛ բնավորությունը, բայց չի սահմանափակվում դրանցով, քանի որ անձը՝ այն «միջուկն է, ինտեգրացնող սկզբունքը, որը միմյանց է կապում անհատի տարբեր հոգեկան գործընթացները և որոշակի հետևողականություն, կայունություն հաղորդում նրա վարքին»⁴: Թեև «անձ» հասկացությունն ամենաբարձր տեղն է գրավում անհատականությունը բնութագրող տերմինների հիերարխիայում, մեր բառապաշարը զարմանալիորեն աղքատ է այն բնութագրելու համար. վիթխարի, պայծառ, ոչ սովորական, ականավոր, կարկառուն, գորշ՝ նման կարգի բնորոշումներից հեռու մենք չենք գնում: Որքան էլ որ վիճելի լինեն խառնվածքի և բնավորության դասակարգման փորձերը, նրանք, այնուամենայնիվ, գոյություն ունեն, ընդ որում նրանցից մի քանիսը պահպանվել են հազարամյակների ընթացքում: *Մինչդեռ անձի դասակարգումը ընդհանրապես գոյություն չունի*: Չէ որ չի կարելի դասակարգում համարել այնպիսիք, ինչպես «դեռահասի անձ», «հանցագործի անձ» և այլն:

Ի դեպ, դասակարգել կարելի է տարբեր ձևով: Առաջին հերթին զուտ նկարագրական, դիտելով մարդկանց վարքում, հակազդումներում, արարքներում, հույզերում եղած նմանատիպ գծերը: Սակայն, իսկական դասակարգումը սկսվում է միայն այն ժամանակ, երբ հայտնաբերվում է մի որոշակի սկզբունք (բանալի, կանոն, օրենք), որը կանխորոշում է դիտվող երևույթների հենց այդպիսի դասակարգումը: Փաստորեն անհատականությունների դասակարգման փորձերի ամբողջ պատմությունը, ըստ էության, դասակարգող սկզբունքի որոնումների պատմություն է:

Անտիկ հեղինակները, մասնավորապես հին հունական բժիշկ Հիպոկրատը (460-377 թթ. մ.թ.ա.), որ առաջին անգամ նկատեց և նկարագրեց իր հայրենակիցների անհատական հոգեբանական առանձնահատկությունները, կարծում էին, որ մարդու հոգեկան կերտվածքը, նրա վարքի առանձնահատկությունները պայմանավորվում են օրգանիզմի չորս հեղուկային միջավայրերի հարաբերակցությամբ՝ արյան (լատիներեն՝ sanguis). լեղու (հունարեն՝ cholé), ինչ որ առեղծվածային և մինչև այժմ չհայտնաբերված «սև մաղձի» (melan

³ БСЭ, 1973, т. 14, с. 578.

⁴ Там же, с. 578.

cholé) և լործունքի (ավիշի, հունարեն՝ phlegma): Այդ հեղուկների անվանումներով էլ կոչվեցին համակարգվող խառնվածքները: Ըստ նրանց, օրգանիզմում արյան գերակշռությունը բերում է սանգվինիկ, լեղու գերակշռությունը՝ խոլերիկ, սև մաղձի գերակշռությունը՝ մե-լանխոլիկ և լործունքի գերակշռությունը՝ ֆլեգմատիկ խառնվածքի դրսևորման: Այդ հեղուկների խառնուրդի մեջ գոյություն ունեցող համաչափությունը հունարեն կոչվում էր «կրասիս»: Մի քանի հարյուրամյակ հետո հռոմեական բժիշկներն այդ հասկացությունն արտահայտեցին լատիներեն «temperamentum» բառով, որը նշանակում է «մասերի պատշաճ համաչափություն»: Հռոմեացի բժիշկ - փիլիսոփա Հալենը, որը ապրում էր մ.թ.ա. 2-րդ դ., առաջին անգամ տվեց խառնվածքների ծավալուն դասակարգումը. այն ընդգրկում էր 13 տիպ:

Հետագայում խառնվածքների տիպերի թիվը նվազեցվեց և հասցվեց չորսի: Դրանցից յուրաքանչյուրը, ինչպես արդեն ասվեց, բնութագրվում էր նշված հեղուկներից յուրաքանչյուրի գերակշռությամբ: Հին հույների տերմինաբանությամբ օգտվում ենք մինչև այսօր: Խառնվածքների էմպիրիկ դասակարգումը պահպանվել է, թեև նրա հիմքի մասին վարկածը չի հաստատվել:

Այսպիսով, խառնվածքի օրգանական հիմքի մասին ուսմունքը, որը ստեղծել էր անտիկ գիտությունը, այսօր իրենից ներկայացնում է միայն պատմական հետաքրքրություն: Սակայն ամբողջովին հաստատվեց այն միտքը, թե հոգեկանի դինամիկական դրսևորումների բազմազանության մեջ կարելի է հայտնաբերել տիպիկ անհատական կառուցվածքների տարատեսակներ: «Խառնվածք» տերմինը հաստատուն կերպով մտել է գիտական շրջանառության մեջ:

Անտիկ գիտության ժամանակներից հետո անցած շատ հարյուրամյակների ընթացքում առաջ էին քաշվում բազմաթիվ նոր վարկածներ, որոնք նպատակ էին հետապնդում բացատրել հոգեկանի դինամիկական դրսևորումների տարբերության պատճառները: Հին բժիշկների ուսմունքի գործած ազդեցության մասին կարելի է դատել նրանով, թե ինչպիսի նշանակություն էր հետագայում տրվել օրգանիզմի հումորալային (լատինական «humor» բառից, որը նշանակում է հեղուկ, հյութ) կառուցվածքներին; Այսպես, գերմանացի փիլիսոփա Ի. Կանտը (18-րդ դ.) առաջնային նշանակություն էր տալիս արյան անհատական առանձնահատկություններին, ինչը և հանդիսանում է, նրա կարծիքով, խառնվածքի բնական հիմքը: Նման տեսակետին

մոտ է ռուս մանկավարժ, կազմախոս և բժիշկ Պ. Ֆ. Լեսգաֆտի (19-րդ դ. վերջ 20-րդ դ. սկիզբ) գաղափարը, որը կարծում էր, թե օրգանիզմի դյուրագրգռության անհատական բնութագրումները և հակազդումների տևողությունը՝ ի պատասխան տարբեր խթանների, կախված են արյան հոսքի արագությունից և ուժից, իսկ դա, իր հերթին՝ արյունատար անոթների հատկություններից, մասնավորապես, պատերի հաստությունից և առածգականությունից, բացվածքի տրամագծից, սրտի ձևից և այլն:

Գերմանացի հոգեբույժ Է. Կրեչմերը հիմնավորեց (սկսած 20-րդ դ. 20-ական թվականներից), որ անհատի հոգեկան տիպը համապատասխանում է մարմնի կազմվածքին, ընդհանուր մարմնական կառուցվածքին⁵: Ըստ Է. Կրեչմերի, մարմնի կազմվածքի տիպի և որոշ հոգեկան հատկանիշների միջև գոյություն ունեցող կապը պետք է բացատրել նրանով, որ ինչպես մարմնի կառուցվածքի տիպը, այնպես էլ հոգեկան առանձնահատկությունները պայմանավորված են արյան քիմիական բաղադրությամբ, ներքին արտազատման (սեկրեցիայի) գեղձերի արտադրած հորմոններով:

Ամերիկացի գիտնական Ու. Շելդոնը (20-րդ դ. 40-ական թվականներ) նույնպես ուղղակի կախվածության մեջ էր դնում անհատական-հոգեբանական գծերը և հորմոնային համակարգի կողմից կարգավորվող մարմնական առանձնահատկությունները (օրգանիզմի հյուսվածքների հարաբերակցությունը)⁶: Շելդոնը ձեռնարկեց խառնվածքի լայն հետազոտում, հինգ տարվա ընթացքում ուսումնասիրելով 200 մարդու: Ֆակտորային վերլուծության օգնությամբ նա մշակեց երեք սանդղակ՝ ինքնաբերական հակումները չափելու համար և ստեղծեց մի սխեմա, որի միջոցով յուրաքանչյուր մարդկային էակին կարելի է նկարագրել մաթեմատիկական պայմանաձևներով: Շելդոնը հատուկ ուշադրություն էր դարձնում մարդկանց այն տիպերի վրա, որոնք ունեն անենաբարձր ցուցանիշը յուրաքանչյուր սանդղակի վրա: Անհատների այն տիպը, որի համար բնորոշ էր սերը դեպի հարմարավետությունը և շատակերությունը, նա նշեց որպես «վիսցերոտոնիկ» (լատիներեն «viscera» բառից, որը նշանակում է ընդերք): Երբեմն այդ տիպը անվանում են ստամոքսային տիպ:

⁵ Типологическая модель Э. Кречмера, Психология и психоанализ характера. Хрестоматия, Самара, 1997, с. 227-303.

⁶ Типологическая модель У. Шелдона, Психология и психоанализ характера. Хрестоматия, с. 304-324.

Նման մարդկանց հատուկ է նաև ջերմությունը, բարեհոգությունը, որոշ դանդաղկոտությունն ու գործնականությունը: Նրանք բավականություն են ստանում շփվելով ուրիշ մարդկանց հետ և անհանգիստ են դառնում հայտնվելով մեկուսացման մեջ: Մարդկանց այն տիպը, որը բնութագրվում էր մկանային գործունեության գերակշռությամբ, նա նշեց որպես «սոմատոտոնիկ» (լատինական "soma" բառից, որը նշանակում է մարմին): Այդ տիպը համապատասխանորեն անվանվում է նաև մկանային տիպ: Նման մարդիկ ֆիզիկապես ուժեղ և դիմացկուն են և հակված չեն շատ ուտելու ու քնելու: Բայց նրանց համար անհրաժեշտ է վարժություններ կատարել և նրանք նախընտրում են գործունյա և եռանդուն կյանք: Անհատների երրորդ տիպը Շելդոնը անվանեց «ցերեբրոտոնիկ» (cerebrum լատինական բառից, որը նշանակում է գլխուղեղ): Այդ տիպը երբեմն անվանում են ուղեղային տիպ: Նման անհատները բնութագրվում են զսպվածությամբ, լարվածությամբ և ծածկամիտ լինելու հակվածությամբ: Նրանք խուսափում են ուրախ, զվարճալի իրավիճակներից, ճնշում են իրենց սոմատիկ և վիսցերալ էքսպրեսիաները (արտահայտչությունները), հաճախ տառապում են մարսողության խանգարումով և կրիտիկական պահերին վատ են տիրապետում իրենց ձայնին: Շատ առումներով երրորդ տիպը նմանություններ ունի այն տիպի հետ, որը Յունգը անվանում էր «ինտրովերտ»: Հարկ է նշել, որ թվարկված են միայն բևեռային տիպերը, և որ Շելդոնը չէր պնդում, թե ամեն մի մարդ ընկնում է նշված կատեգորիաներից մեկի մեջ: Նա չէր պնդում նաև, թե նրա կողմից ուսումնասիրված վարքի բոլոր տեսակները բնածին են. նա բավականին զգույշ էր իր եզրակացությունների մեջ: Սակայն, կոռեկցիայի (համահարաբերակցության) գործակիցը Շելդոնի սանդղակի օգնությամբ որոշված խառնվածքի և, անկասկած, բնատուր բնույթ ունեցող մարմնի տիպերի միջև մոտավորապես հավասար է 0,8-ի: Վերոհիշյալ գծերի և մարդու ֆիզիկական կազմվածքի միջև գոյություն ունեցող որոշակի կապը ենթադրվում էր նաև ինտուիտիվ կերպով: Ստեղծելով իրենց հերոսներին, գրողները հազվադեպ էին օժտում նիհար և ջլապինդ մարմինը Ֆալստաֆի խառնվածքով: Հետևաբար, է. Կրեչմերի և Ու. Շելդոնի տեսությունները չի կարելի համարել հիմնազուրկ:

Մանրագրին հետազոտությունները ցույց են տալիս, որ երկարատև էվոլյուցիայի ընթացքում բարձրակարգ օրգանիզմների մարմնի կառուցվածքի որոշ գծեր հայտնվեցին «կապակցված» վիճակում:

նյարդային համակարգի կառուցվածքի և ֆունկցիաների առանձնահատկությունների հետ, որոնք ազդում են մարդու վարքի վրա⁷: Բայց տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե գլխավոր, այլ շատ անուղղակի կապերի մասին, որոնք ի զորու չեն կանխորոշել անհատի վարքի բարդ ձևերը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ բոլոր հոգեկան դրսևորումների անմիջական հիմքը գլխուղեղի հատկություններն են: Չնայած գաղափարները օրգանիզմի հեղուկների կամ հյութերի նշանակության մասին համահունչ են հումորալային գործոնների դերի վերաբերյալ հետագա պատկերացումներին, խառնվածքի բնական հիմքի նորագույն հետազոտությունների համար դա էական նշանակություն չունի: Այսօր պետք է ընդունել, որ *բոլոր ներքին, ինչպես և արտաքին պայմանները, որոնք ազդում են վարքի դինամիկայի վրա, գործում են պարտադիր կերպով ուղեղի միջոցով*: Յենց ուղեղի ֆունկցիոնալ առանձնահատկությունների, նրա կեղևի և ենթակեղևի, բարձրագույն նյարդային գործունեության հատկությունների մեջ է ժամանակակից գիտությունը տեսնում խառնվածքում գոյություն ունեցող անհատական տարբերությունների պատճառները:

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԻՊԸ ԵՎ ԽԱՈՆՎԱԾՔԸ

Անհատական տարբերությունների բնագիտական հիմունքների ուսումնասիրման պատմության մեջ հիրավի բեկումնային եղավ Իվան Պետրովիչ Պավլովի ուսմունքը մարդու և կենդանիների նյարդային համակարգի տիպերի մասին:

Քանի որ բարձրագույն նյարդային (հոգեկան) գործունեությունը, որը որոշում է արտաքնապես իրականացվող վարքը, հանդիսանում է գլխուղեղի ֆունկցիան, ապա հենց ուղեղի գործունեության նուրբ մանրամասներում է պետք, ըստ Պավլովի, փնտրել հոգեկանի և վարքի անհատական տարբերությունների պատճառները: Իր ուսմունքը նյարդային համակարգի տիպերի մասին Պավլովը ձևակերպել էր գիտական գործունեության վերջին փուլում (20-30-ական թթ.): Տվյալ հիմնահարցի նկատմամբ Պավլովի ունեցած մոտեցման

⁷ Այդ մասին ավելի մանրամասն տես Русалов В.М. Биологические основы индивидуально-психологических различий. М., 1979.

մեջ կարելի է առանձնացնել վերլուծության երեք մակարդակ, որոնք մշակվել էին նույն Պավլովի կողմից, ամենևին ոչ հավասարազոր չափով:

Առաջինը՝ դա, եթե կարելի է այդպես ասել, միկրոմակարդակն է, այսինքն՝ նյարդաբջջիչների գրգռման և արգելակման գործընթացների հատկությունները, նրանց ուժը, հավասարակշռվածությունը և շարժունությունը: Լաբորատոր պայմաններում կատարված պայմանական ռեֆլեքսների հետ կապված փորձերի արդյունքները, ինչպես նաև շների վարքի երկարամյա դիտումները Պավլովին հանգեցրին այն մտքին, որ գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի աշխատանքի ընդհանուր օրինաչափությունների հետ մեկտեղ կարող են ուսումնասիրվել նյարդային գործունեության մեջ եղած տարբերությունները, որոնք կապված են կենդանու *անհատականության* հետ: Նկատվել էր, որ շան վարքի յուրահատկությանը (օրինակ, աշխուժությանը կամ դանդաղկոտությանը, համարձակությանը կամ վախկոտությանը) օրինաչափորեն համապատասխանում էին հիմնական նյարդային գործընթացների որոշ առանձնահատկություններ: Հենց տվյալ հատկությունների այս կամ այն զուգակցումն էլ կազմում է բարձրագույն նյարդային գործունեության տիպը: Բարձրագույն համակարգի *տիպերը*, որոնք համանման են անտիկ հեղինակների նշած *խառնվածքներին*, հատուկ են, Պավլովի կարծիքով, ոչ միայն բարձրագույն կաթնասուն կենդանիներին, այլև մարդուն և ընդհանուր են նրանց համար: Պավլովի դասակարգման մեջ խուլերիկին համապատասխանում է ուժեղ դյուրագրգիռ անհավասարակշիռ տիպը, իսկ մեղանխուլիկին՝ թույլ տիպը: Սանգվինիկը՝ ուժեղ հավասարակշռված շարժուն տիպ է, իսկ ֆլեգմատիկը՝ ուժեղ հավասարակշռված, իներտ:

Իրեն հատուկ դիտողականությամբ Պավլովը նշել է հուզականության բնորոշ գծերը, որոնք հատուկ են հիմնական տիպերից յուրաքանչյուրի համար: Ըստ Պավլովի՝ ուժեղ անհավասարակշիռ տիպը հակված է զայրույթի, թույլը՝ վախի, սանգվինիկի մոտ գերակշռում են դրական հույզերը, իսկ ֆլեգմատիկը ընդհանրապես չի ցուցաբերում քիչ թե շատ բուռն հուզական հակազդումներ շրջապատի նկատմամբ: Պավլովը գրում էր. «Դյուրագրգիռ տիպը իր բարձրագույն դրսևորման մեջ՝ դա մեծ մասամբ ագրեսիվ բնավորություն ունեցող կենդանիներն են ..., իսկ ժայրահեղ արգելակային տիպը՝ դա

այն է, ինչը անվանվում է վախկոտ կենդանի»⁸:

Գլխուղեղի մեծ կիսագնդերի նյարդային գործընթացների հատկությունները ուժը, հավասարակշռվածությունը, շարժունությունը հնարավոր են դարձնում օրգանիզմի հարմարեցումը արտաքին միջավայրի փոփոխվող ներգործություններին: Դա օրգանիզմի գոյության կարևորագույն պայմաններից մեկն է: Նյարդային գործընթացների ուժի մասին է վկայում, մասնավորապես, նյարդային համակարգի հնարավորությունը՝ դիմանալ շատ ուժեղ գրգռումներին, հսկայական ծանրաբեռնվածություններին: Թերևս, դա տիպի ամենակարևոր ցուցանիշն է, որն ունի առավել կենսական նշանակություն: Կեղևի բջիջների աշխատունակությունը, նրանց դիմացկունությունը կախված են հենց գրգռման և արգելակման գործընթացների ուժից:

Լաբորատոր պայմաններում դրա մասին է վկայում դրական պայմանական ռեֆլեքսի մշակման հնարավորությունը այնպիսի ուժգին գրգռիչի վրա, ինչպիսին է սիրենան (օդային տազնապի ծայնային ազդանշան): Լսողության համար դժվար տանելի այդ «ռոնացող» ձայնը վերածում են կերակուր ստանալու ազդանշանի: Փորձակենդանիների մի մասի մոտ հնարավոր է մշակել պայմանական ռեֆլեքս այդ գրգռիչի վրա, ինչը խոսում է ուժեղ լարվածություններին դիմանալու հնարավորության մասին, այսինքն նյարդային գործընթացների ուժի մասին: Իսկ փորձակենդանիների մյուս մասի մոտ այդ «գերուժեղ» գրգռիչը ոչ միայն չի դառնում պայմանական գրգռիչ, այլ ընդհանրապես առաջացնում է նյարդային գործունեության «խափանում», այսինքն կասեցնում է և քայքայում արդեն եղած ռեֆլեքսները: Դա նյարդային գործընթացների թուլություն է:

Իսկ չէ՞ որ հայտնի է, որ շրջապատող աշխարհը մշտապես բազմաթիվ և բազմապիսի ազդեցություններ է գործում նյարդային համակարգի վրա, երբեմն պահանջվում է կատարել դժվար աշխատանք, գտնվել բնակության ռեժիմի չափազանց ծանր, օրգանիզմի համար անսովոր պայմաններում: Այլ խոսքով, կյանքում հանդիպում են արտակարգ իրադարձություններ, մեծ ուժի գրգռիչներ, որոնք պահանջում են զգալի նյարդային լարվածություն: Հաճախ անհրաժեշտություն է առաջանում զսպելու, կանգնեցնելու հակազդումը որոշ գրգռիչների գործողությանը՝ այլ ավելի կարևոր գրգռիչների

⁸ Павлов И. П., Двадцатилетний опыт объективного изучения высшей нервной деятельности (поведения) животных. М., Наука, 1973, с. 321.

գործողության ազդեցության տակ: Գրգռման և արգելակման գործընթացների ուժից է կախված թե ինչ ծանրաբեռնվածության կարող է դիմանալ նյարդային համակարգը:

Կարևոր նշանակություն ունի նաև նյարդային համակարգի տիպի մյուս ցուցանիշը՝ հավասարակշռվածությունը գրգռման և արգելակման ուժի միջև: Նյարդային գործընթացների հավասարակշռվածությունը բնութագրվում է նրանով, թե ինչպես են հարաբերակցվում գրգռման և արգելակման գործընթացները փոփոխվող արտաքին պայմաններին՝ օրգանիզմի հակազդման ժամանակ: Պավլովի լաբորատորիայում որոշ շների մոտ արգելակման գործընթացի ուժը ետ էր մնում գրգռման գործընթացի ուժից, ուստի և ուժեղ գրգռումը չէր կարող ամբողջովին հավասարակշռվել արգելակումով: Այսպիսով, միշտ չէ, որ գրգռման ու արգելակման գործընթացների ուժերը համապատասխանում են մեկը մյուսին, հաճախ արգելակման գործընթացը ետ է մնում գրգռման գործընթացից, և երբեմն մեծ ուժի գրգռումը չի կարող ամբողջովին հավասարակշռվել արգելակումով: Հավասարակշռվածության աստիճանը լինում է տարբեր:


Հաջորդ ցուցանիշը՝ *նյարդային գործընթացների շարժունությունը* գլխուղեղի կեղևում, նույնպես կարևոր նշանակություն ունի: Այն բացահայտվում է ժամանակավոր կապերի համակարգերի վերակառուցման դեպքում: Շրջապատող միջավայրը մշտապես փոխվում է և այդ փոփոխությունները հաճախ լինում են կտրուկ և անսպասելի: Նյարդային գործընթացները պետք է «հասնեն» դրանց հետևից: Բազմաթիվ փորձերը ցույց տվին, որ եթե դրական գրգռիչի հանդեպ մշակվի բացասական արգելակման հակազդում, իսկ բացասականին՝ դրական, ապա պայմանական ռեֆլեքսների վերակառուցման գործընթացը տեղի կունենա տարբեր կերպով. որոշ դեպքերում՝ հեշտ և արագ, իսկ մյուսներում՝ մեծ դժվարությամբ: Դավկայում է, որ կենդանիների մի մասի մոտ գրգռման և արգելակման գործընթացները միմյանց փոխարինում են մեծ արագությամբ, իսկ մյուսների մոտ՝ համեմատաբար դանդաղ:

Նյարդային համակարգի ուժի, հավասարակշռության և շարժունության տարբեր զուգակցումներն էլ կազմում են, ինչպես արդեն նշվեց, բարձրագույն նյարդային գործունեության տիպը: Նման զուգակցումների թիվը կարող է մեծ լինել, բայց Ի. Պ. Պավլովի փորձերում առանձնացվել էր բարձրագույն նյարդային գործունեության ընդամենը չորս տիպ (հիշեցնենք, որ խառնվածքի տիպերը նույնպես

չորսն են), քանի որ տարբեր զուգակցումներում այդ տիպերը հանդիպում են ավելի հաճախ, քան մյուսները կամ էլ հանդես են գալիս առավել ցայտուն և պարզորոշ կերպով:

Արդյունքում Պավլովի կողմից ստեղծվեց բարձրագույն նյարդային գործունեության հիմնական տիպերի դասակարգումը (տես սխեման):

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ



Ելնելով նյարդային գործընթացների ուժի հատկանիշից, այսինքն ուժեղ և գերուժեղ, ինչպես նաև երկարատև գրգռիչների նկատմամբ օրգանիզմի դիմացկունությունից, հակադրվում են ուժեղ և թույլ տիպերը: Վերջինը ընդգրկվում է բարձրագույն նյարդային գործունեության ինքնուրույն թույլ տիպի մեջ:

Այդ տիպի ներկայացուցիչների մոտ երկու նյարդային գործընթացներն էլ թույլ են լինում (հատկապես թույլ է լինում արգելակման գործընթացը): Այսպիսի կենդանիները անհանգիստ են, անդադար նայում են չորս կողմը, կամ, ընդհակառակը, մշտապես կանգ են առնում և քարացած մնում մի դիրքում: Դա բացատրվում է նրանով, որ արտաքին ներգործությունները, երբեմն նույնիսկ աննշան, նրանց վրա չափազանց մեծ ազդեցություն են գործում: Երկարատև կամ ուժեղ գրգռիչների ներգործության տակ նրանք արագորեն հյուսվում են: Թույլ տիպի կենդանիները իրարից տարբերվում են, իհարկե, նաև ուրիշ հատկանիշներով (բացի նյարդային գործընթացների ուժից), բայց նյարդային համակարգի ընդհանուր թուլության ֆոնի վրա այդ տարբերությունները չունեն էական նշանակություն: Ուստի, թույլ նյարդային համակարգ ունեցող բոլոր կենդանիներին Պավլովը դասում էր մեկ տիպի:

Ուժեղ տիպերը, իրենց հերթին, բաժանվում են հավասարակշռվածների և անհավասարակշիռների: Այն օրգանիզմները, որոնք բնութագրվում են ուժեղ, բայց անհավասարակշիռ, կամ Պավլովի արտահայտությամբ՝ գրգռման անզուսպ գործընթացներով, կազմում են առանձին տիպ: Անհավասարակշռվածությունը ուժեղ շների մոտ հանդիպում է սովորաբար այդ մեկ ձևով՝ ուժեղ գրգռման գործընթաց և համեմատաբար թույլ արգելակում: Քանի որ գրգռման գործընթացը չի հավասարակշռվում արգելակումով, ուստի նյարդային շատ մեծ ծանրաբեռնվածության դեպքում այդ կենդանիների մոտ հաճախ տեղի է ունենում նյարդային գործունեության խափանում: Ամենից հաճախ դա պատահում է մարտական, ագրեսիվ, չափից շատ գրգռվող կենդանիների մոտ:

Եվ, վերջապես, *ուժեղները և հավասարակշռվածները*, բաժանվելով ըստ շարժունության սկզբունքի, կազմում են երկու տիպ. աշխույժ և հանգիստ, այլ խոսքով՝ ուժեղ հավասարակշռված շարժուն և ուժեղ հավասարակշռված իներտ (սակավաշարժ)՝ կախված նրանից, թե ինչպես է տեղի ունենում նյարդային գործընթացների փոփոխումը՝ արագ թե դանդաղ: Այդ տիպերի ներկայացուցիչներին հեշտ է տարբերել մեկը մյուսից, նույնիսկ միայն իրենց վարքի արտաքին առանձնահատկություններով: Նրանց մի մասը դյուրագրգիռ է, շարժուն, իսկ մյուսը՝ գրգռվում է դժվարությամբ և դանդաղաշարժ է:

Արդյունքում, առանձնացվեց բարձրագույն նյարդային գործունեության չորս հիմնական տիպ: Նշված տիպերը մարդկանց մոտ դրսևորվում են որպես տարբեր խառնվածքներ: Բարձրագույն նյարդային գործունեության չորս տիպերին համապատասխանում են չորս խառնվածքներ.

1. ուժեղ հավասարակշռված, արագաշարժ (շարժուն, աշխույժ) - սանգվիինիկ խառնվածք.
2. ուժեղ հավասարակշռված, դանդաղաշարժ (հանգիստ, իներտ) - ֆլեգմատիկ խառնվածք.
3. ուժեղ անհավասարակշիռ (անզուսպ) - խոլերիկ խառնվածք.
4. թույլ տիպ - մելանխոլիկ խառնվածք:

Եվ այսպես, համաձայն Ի.Պ. Պավլովի, խառնվածքի հիմքում ընկած են բարձրագույն նյարդային գործունեության տիպերի հատկությունները: Նյարդային գործունեության տիպը՝ օրգանիզմի բնական առանձնահատկությունն է: Այն թեև ժառանգորեն պայմանավորված է, բայց հստակորեն անփոփոխ չէ, զարգանում է և որոշ չափով

փոփոխվում շրջակա պայմանների ազդեցության տակ: Փորձով հաստատված է, օրինակ, որ ուժեղ տիպի մոտ, որի մոտ գերակշռում է գրգռումը, կարելի է մարզումների միջոցով ուժեղացնել ետ մնացող արգելակման գործընթացը:

Հայտնի է նաև այն, որ գոյություն ունեն նյարդային գործընթացների հատկությունների տարիքային փոփոխություններ:

Կենդանիների վրա կատարված փորձերի ընթացքում հայտնաբերված բարձրագույն նյարդային գործունեության տիպերը Ի. Վ. Պավլովը վերագրում էր նաև մարդկանց: «Մենք լիակատար իրավունքով, - գրում էր նա, - կարող ենք տեղափոխել շան վրա բացահայտված նյարդային համակարգի տիպերը ... մարդու վրա»:

Խառնվածքները մաքուր ձևով բավականին հազվադեպ են հանդիպում (ավելի հաճախ խառնվածքի գծերը լինում են փոքր-ինչ ջնջված), սակայն մարդկանց մեջ կարելի է համեմատորեն հեշտությամբ ճանաչել և՛ սանգվինիկներին, և՛ ֆլեգմատիկներին, և՛ մելանխոլիկներին, և՛ խոլերիկներին: Քանի որ մենք շատ ընդհանուր ծանոթներ ունենք (ուսանողներ, դասախոսներ, քարտուղարուհիներ և այլն), ապա կարող ենք սահմանափակվել այս կամ այն մարդկանց պարզ մատնանշումով, որպես այս կամ այն խառնվածքի տիպիկներկայացուցչի: Բայց տվյալ մարդու խառնվածքի մասին պատկերացում ունենալու և այն հասկանալու համար հարկավոր է ուշադիր լինել և նկատել նրան բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները: Այն մարդուն, որին հատուկ է հոգեկան ակտիվությունը, որը արագորեն արձագանքում է շրջապատող իրադարձություններին, ամեն մի նորությամբ (նոր տեսություններ, հոսանքներ, նորածնություններ և այլն), որը ձգտում է տպավորությունների հաճախակի փոփոխության, համեմատորեն հեշտ է տանում անհաջողությունները և անախորժությունները, աշխույժ է, շարժուն, նրան հատուկ են տրամադրության մեծ փոփոխականությունը, հումորի զգացումը, դիմախաղի և շարժումների արտահայտչականությունը, խոսքի հուզական հագեցվածությունը՝ անվանում են *սանգվինիկ*:

Ստենդալը խառնվածքների մասին իր էտյուդում, որը մի շարք բաժիններով մտել է նրա «Գեղանկարչության պատմությունը Իտալիայում» աշխատության մեջ, հետևյալ կերպ է բնութագրում սանգվինիկին. «Բարձր տրամադրության հոգեվիճակ, հաճելի և փայլուն մտքեր, բարյացակամ և նուրբ զգացմունքներ, սակայն սովորությունները աչքի են ընկնում անկայունությամբ, ոգու շարժումների մեջ

կա որոշ թեթևամտություն և փոփոխականություն»:

Ծայրահեղ եռանդուն մարդուն, որն ընդունակ է նվիրվել գործին բացառիկ խանդավառությամբ և կրքով, որն արագաշարժ է, սրընթաց և պոռթկուն, որի համար բնորոշ են բուն հուզական բռնկումները, տրամադրության կտրուկ փոփոխումները, արագ շարժումները և արտահայտիչ, «հրամայական» խոսքը՝ անվանում են խլերիկ:

Խլերիկների անհամբերատարությունը, դյուրաբորբոքությունը և կրքոտությունը հաճախ մեծ տհաճություններ են պատճառում ոչ միայն նրանց շրջապատող մարդկանց, այլև հենց իրենց: Խլերիկի մոտ զգացմունքները առաջանում են նույն արագությամբ, ինչպես և սանգվինիկի մոտ, սակայն դրանք տարբերվում են իրենց ուժով և երկարատևությամբ: Ահա թե ինչ է գրում խլերիկի մասին Ստենդալը. «Բարձր դյուրաբորբոքություն և դյուրագագություն, շարժումները՝ կտրուկ և ավյունոտ, տպավորությունները փոփոխվում են նույն արագությամբ, ինչպես և սանգվինիկների մոտ, սակայն, քանի որ յուրաքանչյուր տպավորությունը աչքի է ընկնում մեծ ուժով, այն ստանում է արդեն ավելի տիրական բնույթ: Մաղձոտ խառնվածք ունեցող մարդուն կլանող բոցը առաջացնում է առավել ճնշող, բացառիկ, անկայուն մտքեր և հակումներ: Նա գրեթե մշտապես պահում է իրեն տազնապալի վիճակում: Հոգեկան բարեհաջողության զգացումը, որ սանգվինիկի համար ոչ մի դժվարություն չի ներկայացնում, խլերիկի համար բոլորովին անծանոթ է: Նա իր հանգիստը գտնում է միայն ամենալարված գործունեության մեջ: Նման մարդը կարող է իր գոյության հաճույքը վայելել միայն մեծ իրադարձությունների ժամանակ, երբ վտանգը կամ դժվարությունը պահանջում են, որպեսզի նա լարի իր ամբողջ ուժերը, երբ նա ամեն վայրկյան ամբողջությամբ գիտակցում է այդ դժվարությունը և վտանգը»⁹:

Խլերիկ խառնվածքի մարդկանց ուղղակի հակապատկերն են ֆլեգմատիկ խառնվածքի ներկայացուցիչները: Որքան արագ են առաջանում զգացմունքները առաջինների մոտ, այնքան դանդաղ է դա տեղի ունենում երկրորդների մոտ, որքան ուժեղ և բուռն են զգացմունքները խլերիկների մոտ, այնքան նրանք հանգիստ ու դանդաղկոտ են ֆլեգմատիկների մոտ, որքան կտրուկ են շարժումները խլերիկների մոտ, այնքան հանդարտ և անշտապ են ֆլեգմատիկների մոտ: Վերջիններս անվրդով են, նրանց ձգտումները և

⁹ Стендаль. Собр. соч. М., 1959, т. IV, с. 220-221.

տրամադրությունները կայուն են, զգացմունքները՝ հաստատուն և խորը, խոսքը և գործողությունները՝ համաչափ, երբեմն նույնիսկ չափից ավելի դանդաղեցված, հոգեկան վիճակը արտաքնապես արտահայտվում է չափազանց թույլ: Նրանց բնորոշ են սառնասրտությունը, բժախնդրությունը, հաճախակի համառություն են դրսևորում, չեն սիրում դավաճանել իրենց սովորություններին: «Այդ խառնվածքի մարդիկ սրախոսությունները ըմբռնում են միայն քառորդ ժամ անց», - նկատում է Ստենդալը: Եվ իրոք, դանդաղկոտ են ոչ միայն ֆլեգմատիկի շարժումները, այլև դանդաղեցված են նրանց մտքերը, անցումները՝ դրդումից դեպի գործողություն: Միայն շատ ուժեղ տպավորությունները կարող են հավասարակշռությունից հանել ֆլեգմատիկ խառնվածք ունեցող մարդուն և ստիպել նրան բուռն կերպով դրսևորել իր ապրումները:

Խառնվածքի չորրորդ՝ մեղանխուլիկ, ձևը ունեցող մարդկանց մոտ զգացմունքները առաջանում են դանդաղ, սակայն, առաջանալուց հետո, աչքի են ընկնում իրենց խորությամբ, իսկ տրամադրությունները՝ մեծ կայունությամբ: Մեղանխուլիկը հեշտորեն է վիրավորվում, նա շատ հիվանդագին կերպով է հակազդում վիրավորանքներին կամ դառնություններին (շատ անգամ երևակայական), դյուրագգաց է, վիրավորվող, սակայն, արտաքնապես թույլ է հակազդում երևույթներին: Դիմախաղը աղքատ է, շարժումները՝ զուսպ, անվստահ, երկչոտ, խոսքը անաշխույժ է, մարած: Մեղանխուլիկը մտախոհ է, կասկածամիտ, տառապում է դատարկ, չնչին բաների պատճառով: Մի խոսքով, այն, ինչը սրտին մոտ չի ընդունի սանգվինիկը, իր ճանապարհից դեն կնետի խուլերիկը, չի նկատի կամ կշռջանցի ֆլեգմատիկը, մեղանխուլիկին կտանջի, կստիպի տառապել, կդարձնի դժբախտ:

Սակայն, ինչպես գրականության մեջ, այնպես էլ կյանքում մենք քիչ դեպքերի չենք հանդիպում, երբ մեղամաղձոտությունը յուրատեսակ դիմակ է, որը հագնում է մարդը իր ապրումներին նշանակալիություն, կարևորություն հաղորդելու համար, ինչպես նաև այն բանի համար, որպեսզի ցույց տա, թե տառապանքը և կարոտը սովորական վիճակ է, թե իբր նրա զգացմունքներն ավելի խորն են և նուրբ, քան ուրիշներինը: Հենց այսպիսի մարդկանց մասին է արհամարհանքով և զայրույթով գրում Ֆլոբերը Լուիզա Կոլեին ուղղված իր նամակում. «Նույն խմորից են պատրաստված բոլոր նրանք, ովքեր խոսում են անցած-գնացած սիրո և մոր կամ հոր գերեզմանի, երա-

նելի հիշողությունների մասին: Նրանք, ովքեր համբուրում են մեղալիոնները, հեկեկում են լուսնի վրա նայելով, քնքուշ խոսքերի հեղեղներ են թափում երեխաներ տեսնելիս, զմայլվում են թատրոնում, իսկ ծովափին կանգնած ընդունում են մտախոհ կեցվածք: Խեղկատակներ, խեղկատակներ: Ծաղրածուներ: Երիցս ծաղրածուներ, որոնց համար իրենց սեփական սիրտը ցատկահենարան է տարբեր ծեռքերումների համար»¹⁰:

Ինչպես տեսնում ենք, խառնվածքի ամեն մի տիպի համար բնորոշ է հոգեկան հատկությունների հարաբերակցությունը, առաջին հերթին ակտիվության և հուզականության տարբեր աստիճաններ, ինչպես նաև շարժողականության այս կամ այն առանձնահատկություններ: Հենց դիմամիկական դրսևորումների որոշակի կառուցվածքով էլ բնութագրվում է խառնվածքի տիպը:

Կյանքում մենք հանդիպում ենք այնպիսի մարդկանց, որոնց մոտ խառնվածքի առանձին գծեր արտահայտված են ավելի վառ կերպով, իսկ մյուսները՝ ավելի թույլ: Դրանք հաճախ զուգակցվում են, միահյուսվում ուրիշ խառնվածքի գծերի հետ: Այդ պատճառով ոչ բոլոր մարդկանց է հնարավոր բաժանել չորս տիպերի: Գիտության մեջ խառնվածքների այլազանության մասին հարցը դեռևս վերջնականապես լուծված չէ: Սակայն նշված տիպերը ընդունված է համարել հիմնական: Կյանքում բավականին հաճախ են հանդիպում մարդիկ, որոնց կարելի է դասել նշված տիպերից որևէ մեկին: Ստորև բերվում են խառնվածքի հիմնական տիպերի բնորոշ ներկայացուցիչների բնութագրումները: Նրանք դեռահասներ են, վեցերորդ դասարանի աշակերտներ, 12-13 տարեկան հասակում (նկարագրությունները Վ. Ս. Մեռլինի, Ե.Ա. Վյատկինի, Ա. Վ. Պետրովսկու): *Սանգվինիկ* (Սերյոժա Տ.-ն) շատ աշխույժ, շարժուն դեռահաս է: Դասարանում ոչ մի բան հանգիստ չի նստում, մշտապես փոխում է իր դիրքը, ինչ որ մի բան պտտեցնում է ծեռքերում, հաճախակի ծեռք է բարձրացնում, զրուցում է հարևանի հետ: Քայլում է արագ և թռչկոտելով, խոսում է արագ տեմպով: Շատ ոյուրազգաց է և հեշտությամբ է հրապուրվում: Ոգևորված և հուզված պատմում է իր տեսած ֆիլմի կամ կարդացած գրքի մասին: Դասերի ժամանակ աշխուժորեն է արձագանքում յուրաքանչյուր նոր փաստի կամ նոր խնդրի: Միևնույն ժամանակ նրա հետաքրքրությունները շատ անկայուն են. տարվե-

¹⁰ Флобер Г. Собр. соч., М., 1959, т. V, с. 61.

լով նոր գործով տղան հեշտորեն անտարբեր է դառնում այդ գործի հանդեպ: Նա ունի աշխույժ, շարժուն և արտահայտիչ դեմք: Նրա դեմքի արտահայտությունից հեշտ է գուշակել, թե նա ինչպիսի տրամադրություն ունի, ինչպես է վերաբերվում այս կամ այն մարդուն կամ առարկային: Իրեն հետաքրքրող դասերի ժամանակ դրսևորում է մեծ աշխատունակություն: «Անհետաքրքիր» դասերի ժամանակ գրեթե չի լսում ուսուցչին, խոսում է դասընկերների հետ, հորանջում: Նրա զգացմունքները և տրամադրությունները շատ փոփոխական են: «Երկու» ստանալուց հետո նա պատրաստ է լացել և հազիվ է զսպում իրեն: Սակայն նրա վատ տրամադրությունը կես ժամ էլ չի տևում: Դեռ դասը չավարտված, նա իր վատ գնահատականի մասին լրիվ մոռանում է և դասամիջոցին արդեն ուրախ և բուռն կերպով վազվզում է միջանցքներով: Չնայած նրա աշխուժությանը և շարժունությանը, նրան հեշտ է ընտելացնել կարգապահության: Փորձառու ուսուցչի մոտ նա շատ լավ է նստում դասերին և երբեք չի խանգարում դասարանի աշխատանքը: Արագ կերպով հարմարվում է նոր պայմաններին և պահանջներին: Նա առաջին տարին է սովորում տվյալ դպրոցում, բայց արդեն ընտելացել է նոր ուսուցիչներին, ընկերացել է երեխաներից շատերի հետ, մտել է դասարանի ակտիվի մեջ:

Խոլերիկ (Սաշա Պ.-ն) դասընկերների միջավայրում աչքի է ընկնում պոռթկունությամբ: Հափշտակվելով ուսուցչի պատմածով, նա հեշտությամբ ընկնում է հուզված վիճակի մեջ և ընդհատում ուսուցչին տարբեր բացականչություններով: Պատրաստ է առանց մտածելու պատասխանել ուսուցչի ամեն մի հարցին և այդ պատճառով հաճախ պատասխանում է անտեղի, տարապատեհ: Ջղայնացած վիճակում արագ դուրս է գալիս համբերությունից, կռվի է բռնվում: Ուսուցչի բացատրությունները լսում է կենտրոնացած կերպով, առանց շեղվելու: Նույնպես կենտրոնացած կերպով կատարում է դասարանային և տնային աշխատանքները: Դասամիջոցների ժամանակ երբեք տեղում չի նստում, այլ անընդհատ վազվզում է միջանցքով կամ էլ կռվում որևէ մեկի հետ, խոսում է բարձրաձայն, արագ: Գրում է նույնպես արագ, լայն-լայն, ծուռունուռ ձեռագրով: Ունի շատ արտահայտիչ դեմք: Հասարակական հանձնարարություններ կատարելիս, ինչպես նաև սպորտային պարապմունքների ժամանակ ցուցաբերում է հափշտակվածություն և համառություն: Նրա հետաքրքրությունները բավականին կայուն են: Դժվարությունների ժամանակ

նա իրեն չի կորցնում և հաղթահարում է դրանք մեծ եռանդով:

Մելանխոլիկ (Կոստյա Մ.-ն) դասերի ժամանակ հանգիստ է, միշտ նստած է լինում նույն դիրքում, միշտ ինչ-որ մի բան պատեցնում է ձեռքերում, տրամադրությունը փոփոխվում է աննշան պատճառներից: Նրա զգայունությունը հիվանդագին է: Երբ ուսուցիչը նրան ուրիշ նստարանի է նստեցնում, նա նեղանում, երկար խորհում է այդ օրը բոլոր դասերին այլալված ու ճնշված է մնում: Դրա հետ մեկտեղ զգացմունքները նրա մոտ արթնանում են դանդաղ: Կրկեսում նա երկար ժամանակ նստում է լուռ, անշարժ դեմքով և միայն աստիճանաբար սկսում է «հալվել»՝ ժպտալ, ծիծաղել, զրույցի բռնվել հարևանների հետ: Հաճախակիորեն կորցնում է իրեն: Ուսուցչի կողմից արված նույնիսկ ամենաթեթև նկատողությունից շփոթվում է, ծայրը դառնում է խուլ և ցածր: Շատ զուսպ է զգացմունքների արտահայտության մեջ: «Երկու» ստանալուց հետո, բոլորովին չփոխելով իր դեմքի արտահայտությունը, նստում է տեղը, բայց տանը, ծնողների վկայությամբ, երկար ժամանակ չի կարող հանգստանալ և ի վիճակի չի լինում աշխատանքի անցնել: Դասերի ժամանակ պատասխանում է անվստահ, կմկմալով, նույնիսկ եթե մանրագնին կերպով պատրաստվել է դասին: Իր կարողությունները և գիտելիքները զնահատում է ցածր, մինչդեռ իրականում նրանք միջինից փոքր-ինչ ավելի բարձր են: Եթե մի ինչ-որ ուսումնական առաջադրանք կատարելու ընթացքում նա դժվարությունների է հանդիպում, շփոթվում է և աշխատանքը ավարտին չի հասցնում: Նրա շարժումները ալարկոտ են, թույլ, խոսում է դանդաղ և բառերը ձգձգելով:

Ֆլեգմատիկ (Վիկտոր Մ.-ն) աչքի է ընկնում իր անշտապությամբ և հանգստությամբ: Նա հարցերին պատասխանում է ոչ անմիջապես և առանց որևէ աշխուժության, որքան էլ, որ լավ գիտենա նյութը: Նրա համար բնորոշ է անխոնջությունը, չի խուսափում լրացուցիչ մտավոր ծանրաբեռնվածությունից և որքան էլ երկար աշխատի, նրան հնարավոր չէ տեսնել հոգնած վիճակում: Նա ձգտում է օգտագործել տրամաբանորեն ընդարձակ, լայնածավալ արտահայտություններ, բառերը արտասանում է հանդարտ ձայնով և չի վախենում շփոթվելուց, կարծես իր երկարախոսությունը հենց սկզբից արդեն գիտի, թե երբ և ինչպես կավարտի սկսած միտքը: Արտաքուստ նա չի գրգռվում և դասի ընթացքում ոչ մի բանի վրա չի զարմանում, անկախ նրանից, թե ինչ է տեղի ունենում դասարանում: Դեռևս ցածր դասարաններից նա սիրում է մաթեմատիկայի և մարմնամարզու-

յան դասերը և մինչև այժմ հավատարիմ է մնում իր այդ համակրանքին: Նա մասնակցում է սպորտային մրցումներին, չդրսևորելով, ի տարբերություն ուրիշ մասնակիցների, որևէ հափշտակվածություն կամ հուզմունք: Նրան հնարավոր չէ տեսնել ոչ անհանգիստ, ոչ ուրախ և ոչ էլ տխուր վիճակում:

Եթե մեր բախտը բերի և մենք հայտնվենք այնպիսի մարդկանց շրջապատում, որոնց մեջ կլինեն միաժամանակ բոլոր չորս խառնվածքների ներկայացուցիչները, ապա շատ գաթակղիչ և հետաքրքրական կլինի տեսնել, թե ինչպես են միևնույն հանգամանքները ստիպում նրանց հակազդելու բոլորովին տարբեր ձևով: Ավելի հաճախ նման հանդիպումների հնարավորություն է ընծեռում գրականությունը: Օրինակ, Ա. Դյունայի «Երեք հրացանակիրներ», «Քսան տարի անց» և «Տաս տարի անց» վեպերում բացառիկ սուր պայմաններում գործում են (յուրաքանչյուրը իրեն համար հատուկ խառնվածքին համապատասխան) սանգվինիկ Դ'Արտանյանը, խուլերիկ Արամիսը, Ֆլեգմատիկ Պորտոսը և մելանխոլիկ Ատոսը:

Խառնվածքի բնական հատկությունները, ինչպես հայտնի է, չէին խանգարում փառավոր հրացանակիրներին խիզախության հրաշքներ գործել: Դա չի հակասում խառնվածքների հոգեբանական բնութագրին:

Յուրաքանչյուր խառնվածքն իր կնիքն է թողնում մարդու վարքի վրա, որոշակի յուրահատկություն է հաղորդում նրան, բայց չի որոշում ո՛չ գործունեության նպատակները, ո՛չ էլ նրա ներքին բովանդակությունը: Կարելի է լինել քաջարի, տաղանդավոր, բոլոր տեսակետներից արտասովոր մարդ և պատկանել խառնվածքի չորս տիպերից յուրաքանչյուրին:

Չի կարելի բոլորովին իրավացի համարել Ստենդալին, որը, ինչպես և որոշ այլ գրողներ, հակված էր չափազանցելու խառնվածքի դերը մարդու անձի ընդհանուր բնութագրության մեջ: Խոսելով խուլերիկի մասին, նա ասում էր, թե «դա մեծ մարդկանց խառնվածք է», - Ֆլեգմատիկի մասին թե նրանք «անհոգ միջակություններ են» և որ «իրենց գրվածքներով հռչակված մարդկանցից շատերը մելանաղծոտ խառնվածք ունեցող մարդիկ են»:

Խառնվածքի յուրաքանչյուր տիպի ներկայացուցիչների կարելի է հանդիպել գործունեության ցանկացած տեսակներում, ցանկացած ազգության և հասարակության մեջ:

Մարդը պետք է գիտենա իր խառնվածքի առանձնահատկու-

յունները, որպեսզի հնարավորություն ունենա «չեզոքացնել» այն գծերը, որոնք խանգարում են նրան իր առօրյա կյանքում, իր ընտրած աշխատանքում, ուրիշ մարդկանց հետ հաղորդակցվելու ընթացքում:

Սանգվինիկը, օրինակ, գիտենալով իր խառնվածքի առանձնահատկությունները, պետք է փնտրի միջոցներ իր որոշ թերությունները հաղթահարելու համար: Նա հատկապես պետք է հիշի այն, որ աշխատանքը գնահատվում է այն դեպքում, երբ այն կատարվում է ոչ միայն արագ, այլև որակով: Ժողովրդական իմաստությունը, որը առկա է այնպիսի ասացվածքներում, ինչպիսին են, օրինակ, «կշտապես» մարդկանց վրադ կծիծաղեցնես», «յոթ չափիր, մեկ կտրիր» գլխավորապես հասցեագրված է արտահայտված սանգվինիկ գծեր ունեցող մարդկանց: Վատ չի լինի, եթե սանգվինիկը հաճախակի վերհիշի այդ ասացվածքները: Սանգվինիկ խառնվածք ունեցող մարդկանց համար օգտակար են սպորտային մարզումները, քանի որ դրանք, մի կողմից, բավարարում են շարժումների մեջ նրանց ստիպողական պահանջը, իսկ մյուս կողմից՝ կարգավորում են նրանց ակտիվությունը:

խլերիկին ոչ քիչ տհաճություններ է պատճառում նրա կոպտությունը, դյուրաբորբոքությունը, մաղձոտությունը, զայրույթը: Նկատելով իր մեջ այդ հատկությունները, մարդը կարող է գտնել նրանց մեղմացնելու դղիները: Ո՞ւմ հայտնի չէ «մինչև քսանհինգը հաշվելու» միջոցը, որին նպատակահարմար է դիմել նախքան մի ինչ-որ բան ասելը կամ անելը զայրացած վիճակում: Այդ հնարքը հոգեբանորեն արդարացված է և բավականին օգտակար է խլերիկ խառնվածք ունեցող մարդկանց համար: Բանն այն է, որ զգացմունքների բուռն պրոթկումը (այսպես կոչված աֆեկտը) շատ դժվար, գրեթե անհնարին է արգելակել, եթե այդ բռնկումն արդեն սկսվել է: Բայց դրա հետ մեկտեղ, աֆեկտը կարելի է կանխել, հնարավորություն չտալ զարգանալու: «Լուռ հաշվելը» հենց այն միջոցներից մեկն է, որի օգնությամբ հնարավոր է կանխել աֆեկտը: Դառնալով սովորություն, այդ միջոցը կարգավորում է խլերիկի հուզական հակազդումները:

Ֆլեգմատիկը հաճախ կանգնում է իներտությունը, դանդաղկոտությունը հաղթահարելու անհրաժեշտության առաջ: Ուստի նրա համար օգտակար է այնպիսի գործունեությունը, որը պահանջում է դրսևորել հակազդումների արագություն, աշխուժություն և ակտի-

վություն: Որոշ չափով ֆլեգմատիկներին հատուկ ալարկոտությունը և անաշխուժությունը հաղթահարվում է աշխույժ և եռանդուն մարդկանց հետ շփման միջոցով, որոնք կարծես թե «թափ են տալիս» նրանց, «վարակում են» իրենց ակտիվությամբ և կյանքի նկատմամբ ունեցած ձեռներեց վերաբերմունքով:

Մելանխոլիկի համար հեշտ չէ, նա, պատկերավոր ասած, մշտապես կրելով մուգ ակնոցներ, ամեն ինչ տեսնում է մռայլ գույներով, ի տարբերություն սանգվինիկի, որն աշխարհին նայում է վարդագույն ակնոցով: Բայց նույնիսկ մելամաղձոտ խառնվածքի այնպիսի գծեր, ինչպիսիք են ամոթխածությունը, երկչոտությունը, ինքնամփոփությունը, մռայլությունը կարելի է հաղթահարել՝ մշտապես շփվելով ձեռներեց մարդկանց հետ, ներգրավվելով հասարակական աշխատանքի մեջ, ստանձնելով, առանց դժվարություններից վախենալու, պատասխանատու հանձնարարություններ: Այս ամենը կօգնի, նրբագգաց և կարեկից մնալով հանդերձ, ավելի լավ տիրապետել սեփական զգացմունքներին:

Հասկանալի է, որ խոսքը չի գնում խառնվածքի արմատական փոփոխման մասին, որի առանձնահատկությունները անձի այլ գծերի, օրինակ՝ բնավորության համեմատ, բավականին կայուն են: Սակայն կյանքի ընթացքում նույնիսկ խառնվածքը կարող է ենթարկվել էական փոփոխությունների:

ԽԱՈՆՎԱԾՔՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս խառնվածքի տիպ հասկացության տակ ընդունված է հասկանալ օրինաչափորեն իրար հետ զուգակցված և տվյալ մարդկանց խմբի համար ընդհանուր բնույթ կրող հոգեբանական հատկությունների որոշակի ամբողջությունը:

Հոգեբանության մեջ արդեն փաստ է դարձել այն, որ հնարավոր է որոշել խառնվածքի որոշ հատկությունները իրենց արտաքին հատկանիշների հիման վրա, հետազոտել, թե ինչպես է դրսևորվում խառնվածքի տիպը բնորոշող հատկությունների մեծ օրինաչափ փոխադարձ կապը: Այդ կապը դրսևորվում է հետևյալ ձևով. որքան տվյալ մարդու մոտ ցցուն է արտահայտված խառնվածքի մեկ հատկությունը (այն դրսևորվում է համապատասխան թվով), այնքան ավելի շատ կամ, ընդհակառակն, ավելի քիչ է արտահայտված խառնվածքի մյուս հատկությունը (համապատասխանորեն ավելի մեծ կամ

փոքր կլինի այդ հատկությունն արտահայտող թիվը): Պարզվում է, որ խառնվածքի տարբեր հատկությունների դրսևորման աստիճանն արտահայտող թվերը կարող են տարբեր լինել, բայց նրանց որոշակի մաթեմատիկական հարաբերակցությունը մնում է հաստատուն, ինչպես որ հաստատուն է մնում կոտորակը՝ համարիչը և հայտարարը հավասար չափով փոքրացնելու դեպքում:

Ամեն մի խառնվածքի համար բնորոշ հատկությունների փոխադարձ կապը արտահայտվում է նաև նրանում, որ յուրաքանչյուր հատկության որակական բնութագիրն առանձին վերցրած կախված է խառնվածքի տիպի բոլոր մյուս հատկություններից: Օրինակ, անզսպվածությունը, ինչպես հայտնի է, կախված է նյարդային գործընթացների ուժից և նրանց հավասարակշռվածությունից: Անհավասարակշռվածությունը, այսինքն, գրգռման գերակշռությունը արգելակման նկատմամբ, հնարավոր է նյարդային համակարգի ուժի տարբեր արտահայտվածության դեպքում: Եթե մի մարդու մոտ ուժեղ գրգռումը գերիշխում է ավելի թույլ արգելակման վրա, ապա դա մոլեգին անզսպվածություն է: Իսկ եթե թույլ գրգռումը գերիշխում է առավել թույլ արգելակման վրա, ապա մարդու անզսպվածությունը կրում է հիստերիկ անհավասարակշռվածության բնույթ:

Խառնվածքների տիպերի հոգեբանական բնութագիրը որոշվում է հետևյալ հիմնական հատկություններով:

Սենզիտիվություն

Այս հատկության մասին մենք դատում ենք ելնելով նրանից, թե ինչպիսին է մարդու որևէ հոգեկան հակազդման առաջացման համար անհրաժեշտ արտաքին ազդեցությունների փոքրագույն ուժը և ինչպիսին է այդ հակազդման առաջացման արագությունը:

Ռեակտիվություն

Այս հատկության մասին մենք դատում ենք ելնելով այն բանից, թե ինչպիսին է նույն ուժի արտաքին կամ ներքին ազդեցություններին (քննադատական դիտողություն, վիրավորական խոսք, սպառնալիք հանկարծական և անսպասելի ձայն) հակազդումների ակամայության աստիճանը:

Ակտիվություն

Այս հատկության մասին մենք դատում ենք, ելնելով այն հանգամանքից, թե ինչ աստիճանի ակտիվությամբ է մարդը ներգործում արտաքին աշխարհի

վրա և նպատակին հասնելու համար հաղթահարում խոչընդոտները: Այս հատկությանը կարելի է դասել նպատակասլացությունը, համառությունը, երկարատև աշխատանքի ժամանակ ուշադրության կենտրոնացվածությունը և այլն:

*Ռեակտիվության և
ակտիվության
հարաբերակցություն*

Այդ հատկության մասին մենք կարող ենք դատել, ելնելով այն հանգամանքից, թե ամենից ավելի ինչից է կախված մարդու գործունեությունը՝ արտաքին կամ ներքին պատահական հանգամանքներից (տրամադրությունից, ցանկություններից, պատահական իրադարձություններից) կամ էլ նպատակներից, մտադրություններից, ձգտումներից, համոզմունքներից:

*Հակազդումների
տեմպեր*

Այս հատկության մասին մենք դատում ենք ըստ տարբեր հոգեկան հակազդումների և գործընթացների, ըստ շարժումների արագության, խոսքի տեմպի, հնարամտության, մտապահման արագության և մտքի սլացիկության:

*Ճկունություն և նրան
հակադիր որակ
անձկունություն
(ռիզիկոսություն)*

Այս հատկության մասին կարելի է դատել նկատի ունենալով, թե որքան հեշտ և ճկուն է հարմարվում մարդը արտաքին ազդեցություններին (ճկունություն) կամ ընդհակառակն, որքան իներտ և քարացած են նրա վարքը, սովորությունները, դատողությունները (անձկունություն):

*Էքստրավերտություն
և դրա հակադիր
որակը
ինտրովերտություն*

Այս հատկության մասին մենք դատում ենք ըստ այն հանգամանքի, թե ինչից են առավելապես կախված մարդու հակազդումները և գործունեությունը տվյալ պահին առաջացող արտաքին ազդեցություններից (էքստրավերտություն), թե պատկերներից, մտապատկերներից և մտքերից, որոնք կախված են անցյալի և ապագայի հետ (ինտրովերտություն)¹¹:

*Հուզական
գրգռականություն*

Այս հատկության մասին մենք դատում ենք՝ ելնելով այն բանից, թե որքան թույլ ազդեցություն է հարկավոր հուզական հակազդման առաջացման հա-

¹¹ Типологическая модель К. Юнга. – Психология и психоанализ характера. Хрестоматия, с. 174-226.

մար և թե ինչպիսի արագությամբ է այն առաջանում:

Ներկայումս գիտությունը դեռ չի կուտակել բավականաչափ փաստեր, որպեսզի հնարավոր լինի տալ խառնվածքների բոլոր տիպերի ամբողջական բնութագիրը՝ որոշակի ծրագրով: Սակայն խառնվածքների ավանդական չորս տիպերի հոգեբանական բնութագրում հստակորեն արտահայտված է տվյալ որակների դրսևորումը, ինչը մենք տեսանք խառնվածքի տարբեր տիպերին դասված չորս աշակերտների վերոհիշյալ բնութագրերում:

ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիֆերենցիալ հոգեֆիզիոլոգիան, որը ներկայումս կազմում է հոգեբանության բավականին ծավալուն բաժինը, փաստորեն սկզբնավորվել է Բ.Մ. Տեպլովի աշխատություններից: Ավելի ուշ նրա աշակերտ Վ.Դ. Նեբիլիցինը անվանակոչեց այդ բաժինը: Բ.Մ. Տեպլովը դիֆերենցիալ-հոգեբնախոսական պրոբլեմատիկայի մշակմանը նվիրաբերվեց այն բանից հետո, երբ արդեն կատարել էր ընդունակությունների և օժտվածության հիմնահարցի հետ կապված մի շարք հետազոտություններ: Նա սերտ կապ էր տեսնում բարձրագույն նյարդային գործունեության տիպաբանական առանձնահատկությունների և խառնվածքի միջև, թեև զուգահեռ չէր անցկացնում խառնվածքի չորս դասական տիպերի և բարձրագույն նյարդային գործունեության պավլովյան չորս տիպերի միջև: Տիպաբանական հատկությունների արտահայտման բնագավառը նա սահմանափակում էր *հոգեկան գործունեության դինամիկական բնութագրերով*: «... Մարդիկ տարբերվում են մեկը մյուսից նրանով, թե ինչպես են նրանց մոտ ձևավորվում կարողությունները և սովորությունները, ինչպես են նրանք յուրացնում գիտելիքները, թեև նրանց ձևավորումը և յուրացումը միշտ ենթարկվում է որոշ ընդհանուր օրենքների»¹²: Անհատական-հոգեբանական առանձնահատկությունների (բացառությամբ հոգեկան գործունեության բովանդակության հարցի) ու-

¹² *Теплов Б.М., Типологические свойства нервной системы и их значение для психологии. – Материалы совещания по философским вопросам физиологии высшей нервной деятельности и психологии. М., 1962, с. 5с*

սումնասիրման նման ասպեկտը հստակորեն մատնանշում է ուսումնասիրվող առարկայի յուրահատկությունը և ցուցադրում նրա ոչ միայն տեսական, այլև գործնական անհրաժեշտությունը, որը կայանում է «նյարդային համակարգի յուրաքանչյուր տիպի համար լավագույն ուղիներ և մեթոդներ գտնելու մեջ», ինչը օգտակար կլինի երեխաների դաստիարակման և ուսուցման, չափահասների աշխատանքի և կյանքի կազմակերպման գործում¹³:

Բ.Մ. Տեպլովը հաղթահարեց նաև ընդհանուր տարածում գտած և մինչև այդ ժամանակ միակ կասկած չհարուցող տեսակետը՝ տիպաբանական որակների որոշ բևեռների կենսաբանական և սոցիալական արժեքի մասին (օրինակ, նյարդային համակարգի ուժը՝ լավ է, իսկ թուլությունը՝ վատ): Դուրս գալով այդ կաղապարից, Բ.Մ. Տեպլովը շեշտը դրեց յուրաքանչյուր հատկության հիման վրա առաջացող հոգեբանական դրսևորումների որակական յուրահատկության և առավելության բացահայտման վրա: Դա տեսականորեն առաջադեմ, գիտականորեն հիմնավորված և գործնականորեն չափազանց կարևոր քայլ էր:

Բ.Մ. Տեպլովի տաղանդավոր աշակերտ՝ Վ.Դ. Նեբիլիցինի տեսական ժառանգությունը հիմնականում վերաբերում է երկու խոշոր հարցերի՝ այն նյութերի ընդհանրացմանն ու վերլուծությանը, որ կուտակվել էին տեպլովյան լաբորատորիայում և այն վարկածների ստեղծմանը, համաձայն որոնց նյարդային համակարգի մասնավոր հատկությունների հետ մեկտեղ գոյություն ունեն նաև այսպես կոչված ընդհանուր հատկություններ:

Վ.Դ. Նեբիլիցինը ապացուցեց նյարդային համակարգի նոր, նախկինում անհայտ հատկության գոյությունը, որը նա անվանեց «դինամիկություն» և որն արտահայտվում էր այն բանում, թե գլխուղեղի կեղևում որքանով արագ ու հեշտ են ստեղծվում ժամանակավոր կապերը:

Վ.Դ. Նեբիլիցինը սկսեց նաև դինամիկության օնտոգենեզի հետազոտումը: Ռուսինացի հոգեբան Կ. Վոյկովի ատենախոսությունում, որը ղեկավարում էր Նեբիլիցինը, ցույց էր տրված, որ արդեն 10 տարեկան երեխաների մոտ գոյություն ունեն ոչ միայն անհատական տարբերություններ՝ կապված այդ հատկության հետ, այլև սինդ-

¹³ Теплов Б.М., Типологические свойства нервной системы и их значение для психологии, с. 33.

րոմների սկզբունքային նմանություն:

Գ.Ա. Շիրարովսկայայի և Ի.Վ. Ռավիչ-Շչերբոյի գիտափորձերի ժամանակ հայտնաբերվեց դինամիկության սինդրոմի սկզբունքային կայունությունը նաև ավելի լայն տարիքային ժամալում:

Այսպիսով, հոգեբաններ Բ.Մ. Տեպլովի և Վ.Դ. Նեբիլիցինի աշխատություններում ճշտվում և հարստանում են պատկերացումները մարդու նյարդային գործունեության տիպի հատկությունների մասին:

Դինամիկության հետ միասին ուշադրություն դարձվեց նաև նոր, մինչ այդ անհայտ հատկության լաբիլության վրա, որից կախված է նյարդային գործընթացի առաջացման և դադարեցման արագությունը, ի տարբերություն շարժունության, որը բնութագրում է գործընթացների արագությունը: Պարզվեց, որ բարձրագույն նյարդային գործունեության տիպի հատկությունները կարող են լինել ավելի ընդհանուր, բավականին լայն կերպով բացահայտվելով հոգեկանի դինամիկության մեջ, և ավելի մասնավոր, ունենալով գործողության ավելի սահմանափակ շրջանակ: Ցույց էր տրվել (ըստ Է.Ա. Գոլուբևայի տվյալների), որ հոգեկան ակտիվությունը, որպես խառնվածքի գիծ, անմիջականորեն կախված է նյարդային համակարգի տիպի յուրահատուկ հատկությունից:

Նյարդային համակարգի որոշ հատկությունների ժառանգական պայմանավորվածությունը որոշելու համար օգտագործվել էր, այսպես կոչված, «երկվորյակային մեթոդը»: Ինքնին հոգեբանախոսական հատկությունների նմանությունը երկվորյակների մոտ դեռևս չի կարող համարվել այդ հատկությունների ժառանգական ծագման ապացույց, քանի որ երկվորյակների նմանությունը կարող է բացատրվել զարգացման պայմանների նույնությամբ: Բայց գոյություն ունի երկվորյակների երկու տիպ. միաբջիջ՝ բոլորովին միանման ժառանգականությամբ, և երկբջիջ, որոնց ժառանգականությունը տարբերվում է այնպես, ինչպես եղբայրների և քույրերի մոտ:

Հասկանալի է, որ եթե հաշվի առնվեն այն հատկանիշները, որոնք պայմանավորված են գլխավորապես միջավայրի ազդեցությամբ, երկվորյակների միջև (զույգի ներսում) նմանության աստիճանը կախված չի լինի այն բանից, թե այդ երկվորյակները միաբջիջ են, թե երկբջիջ: Բայց եթե մենք հաշվի առնենք այն հատկանիշները, որոնք պայմանավորված են հենց ժառանգությամբ, ապա միաբջիջ երկվորյակների մոտ ավելի շատ նմանություն կգտնենք, քան երկբջիջ

երկվորյակների: Հատուկ համադրելով նյարդային համակարգի տիպի հատկությունների նմանությունները (զույգերի ներսում) միաբջիջ և երկբջիջ երկվորյակների մոտ, Ի. Վ. Ռավիչ-Շչերբոն ստացավ տվյալներ, որոնք հնարավորություն տվեցին ապացուցելու ժառանգականության էական դերը:

Վ.Ս. Մեռլինը, գտնելով, որ խառնվածքի էությունը, հետևաբար նաև խառնվածքի հասկացությունը բնութագրվում է նրա օրինաչափություններով և գործունեության մեջ նրա դերով, խառնվածքի և անձի հատկությունների հիմնահարցը դիտում էր ամենաընդհանուր ձևով: Դրանով իսկ նա ձևակերպեց խառնվածքի տեսության հիմնական հարցի ամենաընդհանուր պատասխանը, որը վերաբերում էր անձի զարգացման մեջ համեմատաբար ավելի կայուն և ավելի փոփոխական հոգեկան հատկությունների փոխկապակցությանը: Նա ապացուցեց, որ նյարդային համակարգի յուրաքանչյուր հատկություն ազդեցություն է գործում խառնվածքի տարբեր կողմերի վրա, իսկ ակտիվության, հուզականության և շարժողականության (մոտորիկայի) դինամիկական առանձնահատկություններից յուրաքանչյուրը կախված է ոչ միայն պարզապես նյարդային համակարգի այս կամ այն հատկությունից, այլ նաև ամբողջությամբ վերցրած նյարդային համակարգի տիպից:

Իր հետազոտությունների մեջ Վ.Ս. Մեռլինը մեծ տեղ էր հատկացնում խառնվածքի և անձի փոխհարաբերությունների հիմնահարցին. «Ի՞նչ կերպով է ... իրագործվում պահպանողական և կայուն խառնվածքի ակտիվ հարմարումը գործունեության փոփոխվող պահանջներին: Կարո՞ղ են արդյոք ամենատարբեր խառնվածք ունեցող մարդիկ հասնել հավասարապես բարձր արդյունքների որոշակի բնագավառում: Եթե դա հնարավոր է, ապա ինչպե՞ս է դա իրականանում»¹⁴: Կարո՞ղ է արդյոք յուրաքանչյուր երեխա, անկախ այն անհատական առանձնահատկություններից, որոնք հատուկ են տվյալ ժամանակ, զարգացման որոշակի ժամանակահատվածում, հետևաբար նաև անկախ խառնվածքից, պատրաստված լինել աշխատանքի տարբեր ձևերին և տարբեր մասնագիտություններին: Գործունեության հոգեբանության այս բոլոր հարցերի լուծումը կարող է ունենալ ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն:

¹⁴ Мерлин В.С., Очерк теории темперамента. М., Просвещение, 1964, с. 33.

Մարդու խառնվածքի դրսևորումները իրենց վրա են կրում սոցիալական ազդեցությունների, հասարակական նորմերի և պահանջների կնիքը: Բայց յուրաքանչյուր մարդ ունի իր խառնվածքի տիպը, իսկ նրա հիմքում ընկած նյարդային համակարգի հատկությունները բավականին կայուն են: Չի կարելի հաշվի չառնել հոգեկանի դինամիկական գծերի միջև գոյություն ունեցող բնությամբ պայմանավորված տարբերությունները:

Ի.Պ. Պավլովը նույնացնում էր նյարդային գործունեության տիպը և խառնվածքը: Հետագա հետազոտությունները ցույց տվեցին, որ նյարդային գործունեության տիպը ոչ միշտ է համընկնում խառնվածքի տիպի հետ: Պարզվեց, որ խառնվածքի վրա ազդում են ոչ միայն նյարդային համակարգի հատկությունները, այլև *անձի մարմնական (սոմատիկ) կազմվածքը ամբողջությամբ վերցրած*: Նյարդային համակարգի տիպը հարկավոր է դիտել որպես խառնվածքի նախադրյալ: Այսպես, հաստատված է, որ այլ համահավասար պայմանների դեպքում կրավորական-պաշտպանական վարք մեծ մասամբ նկատվում է նյարդային համակարգի թույլ տիպ ունեցող կենդանիների մոտ, իսկ հարձակողական, ագրեսիվ վարք՝ ուժեղ, անհավասարակշիռ առանձնյակների մոտ:

Անցյալում շատ հոգեբաններ խառնվածքի դրսևորումները հանգեցնում էին հուզական բնագավառի: Իրականում խառնվածքը դրսևորվում է ոչ միայն հուզական, այլև մտածողական գործընթացներում: Երբ խոսում են մարդու խառնվածքի մասին, նկատի են ունենում ոչ թե մեկուսացած հոգեբանական գործընթացների դինամիկական, այլ անձի ամբողջական վարքի դինամիկական առանձնահատկությունների ողջ համակարգը՝ սինդրոմը, մարդու վարքի իմպուլսիվ-դինամիկական կողմի առավել ընդհանուր բնութագիրը, որը արտահայտում է գլխավորապես նյարդային գործունեության հատկությունները:

ԽԱՌՆՎԱԾՔԻ ԴԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խառնվածքը ազդում է ակտիվության բնույթի (աշխատունակության, հաղորդակցության կամ սոցիալական կոնտակտի), փոփոխվող պայմաններին հեշտ հարմարվելու վրա: Դինամիկական գծերը արտահայտվում են ոչ միայն վարքի արտաքին ձևերում, ոչ

միայն շարժումներում, դրանք իրենց զգացնել են տալիս նաև մտավոր, ինչպես նաև դրդումների, ընդհանուր աշխատունակության ուղղումներում:

Խառնվածքի առանձնահատկությունները դրսևորվում են նաև ուսումնական պարապմունքների և աշխատանքի ժամանակ: Պետք է նկատի ունենալ, որ տարբերությունները ըստ խառնվածքների՝ տարբերություններ են ոչ թե ըստ հոգեկան հնարավորությունների մակարդակի, այլ ըստ արտահայտման յուրօրինակությունների:

Յուրաքանչյուր խառնվածք ունի ինչպես իր առավելությունները, այնպես էլ իր բացասական կողմերը: Այդ մասին կոնկրետ պատկերացում են տալիս այն հետազոտությունները, որոնք ուսումնասիրում են գործունեության համար նշանակություն ունեցող նյարդային համակարգի առանձին հատկությունների տիպը և խառնվածքի համապատասխան գծերը:

Տիպի թուլությունը, ըստ հատուկ հետազոտությունների տվյալների, արտահայտում է ոչ միայն գրգռման և արգելակման գործընթացների ուժի պակասությունը, այլև դրա հետ կապված բարձր զգայունակությունը, ռեակտիվությունը: Դա նշանակում է, որ նյարդային համակարգի թույլ տիպը ունի իր հատուկ արժանիքները: Վ. Դ. Նեբիլիցինի լաբորատորիայում այն աշխատակիցները, որոնց մոտ հայտնաբերվել էր նյարդային համակարգի թույլ տիպ, նույնիսկ հպարտանում էին դրանով: Տվյալ տիպի դրսևորման յուրօրինակությունների, հնարավորությունների մասին կարելի է դատել բազմաթիվ փորձարարական տվյալների և կյանքի հիման վրա:

Իրագործվում էին, օրինակ, հետևյալ փորձերը. մի խումբ աշակերտների (նախապես որոշվում էր նրանց նյարդային համակարգի ուժը) առաջարկվում էր լուծել ամենապարզ թվաբանական խնդիրներ ամբողջ դասի ժամանակ: Պարզվում էր, որ տվյալ առաջադրանքի կատարման ընթացքում ի հայտ են գալիս հետևյալ տարբերությունները. թույլ տիպի աշակերտները սկզբնական փուլում լուծում էին ավելի մեծ քանակությամբ խնդիրներ (զգացնել էր տալիս իրենց համար հատուկ բարձր զգայունությունը շրջապատի նկատմամբ, բարձր ռեակտիվությունը), բայց դրա փոխարեն հենց նրանք էլ ավելի արագ էին հոգնում: Իսկ այն աշակերտների համար, որոնց խառնվածքի գծերը պայմանավորված էին ուժեղ նյարդային համակարգով, պահանջվում էր որոշ ժամանակ հուսնի մեջ մտնելու համար, բայց նրանք կարող էին կատարել առաջադրանքը ավելի երկար ժա-

մանակի ընթացքում՝ առանց իջեցնելու աշխատանքի արդյունավետությունը:

Հետազոտություններից մեկի մեջ կատարվել էին առավել լավ սովորող բարձր դասարանցիների ուսումնական աշխատանքի դիտումներ: Նրանց նյարդային համակարգի ուժը որոշվում էր լաբորատոր պայմաններում, և պարզվեց, որ այդ աշակերտների մեջ կային նյարդային համակարգի ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ ներկայացուցիչներ: Սակայն ուսումնական պարապմունքների գործընթացը նրանց մոտ ընթանում էր տարբեր կերպ, նայած իրենց խառնվածքին: Այսպես, եթե աշակերտի ինքնուրույն պարապմունքներում առանձնացնենք երեք փուլ՝ նախապատրաստական, կատարողական և ստուգողական, ապա պարզվում է, որ *ուժեղները* քիչ ժամանակ էին տրամադրում նախապատրաստական և ստուգողական գործողություններին (օրինակ, ուղղումները և լրացումները շարադրությունների մեջ նրանք անում էին գլխավորապես բուն աշխատանքի ընթացքում), իսկ *թույլերի* համար բնորոշ էր նախապատրաստական և ստուգողական աշխատանքների երկարատևությունը (մասնավորապես, շարադրությունների մեջ ուղղումների և լրացումների մեծ մասը կատարվում էր լրացուցիչ ժամանակի ընթացքում՝ ինքնաստուգման ժամանակ): Ահա մեկ այլ տարբերություն ևս. *ուժեղները* բավականին երկար կարող էին կատարել մի շարք առաջադրանքներ և հանձնարարություններ առանց հատուկ պլանավորման և ըստ ժամանակի բաշխման, այնինչ, *թույլերը* նախընտրում էին նոր աշխատանքին ձեռնամուխ լինել միայն նախկին աշխատանքը ամբողջությամբ ավարտելուց հետո, իսկ երկարաժամկետ աշխատանքների համար փորձում էին նախապես կազմել օրացուցային պլան օրվա, շաբաթվա կամ ամսվա համար: Վերջնական արդյունավետության տեսակետից հնարավոր չէր նախապատվություն տալ այս կամ այլ խառնվածքի տեր աշակերտներին:

Հաստատված է, որ որոշ մոնոտոն, միապաղաղ աշխատանքներում համեմատաբար թույլ նյարդային համակարգ ունեցող անձինք ունեն որոշակի առավելություններ: Բարձր զգայնությունը պաշտպանում է նրանց դյուրըմբռնողության նվազումից, քնկոտության զարգացումից, ինչը հեշտությամբ կարող է առաջանալ տվյալ պայմաններում: Բայց աշխատանքի այն տեսակներում, որտեղ հարկ է լինում գործ ունենալ առավել ուժեղ, անսպասելի կամ սարսափ առաջացնող գրգռիչների հետ, թույլ տիպի անձինք հենց իրենց ֆի-

գիղղոգիական առանձնահատկությունների պատճառով կարող են ի վիճակի չլինել կատարելու այդ աշխատանքը:

Հետաքրքրություն են ներկայացնում հոգեբանական դիտումների տվյալները իրավաբանության բնագավառում: Համաձայն Ա.Ռ. Ռատինովի՝ նյարդային համակարգի ուժեղ տիպ ունեցող մասնագետները, մասնավորապես, սանգվինիկները և խոլերիկները, իրենց առավել հաջող են դրսևորում պրակտիկ գործունեության մեջ, իսկ ֆլեգմատիկները՝ գիտական «կաբինետային» աշխատանքում: Թույլ տիպի անձանց՝ մելանխոլիկների համար դատավորի, փաստաբանի, քննիչի, դատախազի և այլոց աշխատանքը կարող է բավականին լուրջ դժվարություններ պատճառել:

Հատկանշական են նաև սպորտի բնագավառի տվյալները: Ուսումնասիրվել են աշակերտների անհատական տարբերությունները իրենց հաջողություններում, որոնց նրանք հասնում են դասերի ժամանակ մարզումների ընթացքում, իսկ հետո՝ հրապարակային ելույթների պայմաններում: Պարզվում է, որ նյարդային համակարգի ուժեղ տիպի աշակերտները պատասխանատու մրցումների ժամանակ ցուցաբերում են ավելի բարձր արդյունքներ, քան մարզումների ժամանակ, մինչդեռ թույլ տիպի աշակերտները ավելի հաջող կերպով են իրենց դրսևորում մարզումներում, իսկ մրցումների ժամանակ նրանց արդյունքները վատանում են, կորցնում իրենց կայունությունը: Դա բացատրվում է խառնվածքների միջև եղած տարբերություններով ըստ գրգռականության, նյարդային դիմացկունության, ըստ նրա, թե ինչպես են ընդունում հուզական վիճակները, որոնք առաջանում են պատասխանատվության, ռիսկի ազդեցության տակ:

Այսպիսով, նյարդային համակարգի ավելի ուժեղ տիպ ունեցող անձինք ավելի հաջող կերպով են լուծում մեկ տեսակի խնդիրներ, իսկ ավելի թույլ մարդիկ՝ ուրիշ: Հաճախ, նույն խնդրի լուծմանը նյարդային համակարգի ուժով տարբերվող անձինք պիտի հասնեն տարբեր ճանապարհներով:

Ոչ հեռու անցյալում ավանդական հոգեֆիզիոլոգիան գտնում էր, որ թույլ նյարդային համակարգը, որպես կանոն, ավելի պակաս դիմացկուն է բազմիցս անգամ տրվող գրգռիչների հանդեպ: Սակայն, վերջին ժամանակներս մի շարք հետազոտությունների ընթացքում ստացված արդյունքները հնարավորություն են տալիս դիտելու այդ հատկության էությունը այլ դիրքերից: Մասնավորապես

Ն.Մ. Պեյսախովը ապացուցել է, որ թույլ տիպի ներկայացուցիչները առավելություն ունեն ուժեղների համեմատ ստատիկ, անփոփոխ բնույթի աշխատանք կատարելու դիմացկունության մեջ:

Բ.Ա. Վյատկինը, Վ.Ի. Ռոժդեստովենսկայան, ուսումնասիրելով մոտորային և մտավոր գործունեության դինամիկան՝ ըստ նյարդային համակարգի ընդհանուր տիպի, հայտնաբերեցին թույլերի որոշ արդյունավետությունը միապաղաղ, հոգնեցուցիչ աշխատանքներում: Նյարդային համակարգի տիպի հատկություններով կանխորոշված ֆիզիկական հատկությունների զարգացման մակարդակի և դինամիկայի առանձնահատկությունները, որոնք հայտնաբերվել էին այդ հետազոտությունների ընթացքում, կարելի է դիտել որպես սպորտում գործունեության ոճի հաջող ձևավորման անհրաժեշտ պայման:

Վ.Ս. Մեռլինը իրավացի է, երբ պնդում է, թե ամենաբարձր ձեռքբերումները գործունեության տարբեր բնագավառներում մատչելի են հավասար չափով բոլոր մարդկանց համար՝ շնորհիվ աշխատանքի անհատական ոճի մշակման:

Սակայն աշխատանքային և սպորտային պրակտիկայում մարդն իրականացնում է գործունեության նաև այնպիսի ձևեր, որոնք ընթանում են չափազանց բարդ արտակարգ իրավիճակներում, ժամանակի ծայրահեղ սղության պայմաններում: Դրանց թվին կարելի է դասել օպերատորի գործունեությունը, որը սպասարկում է ձեռնարկություններում ավտոմատացված համակարգերը, տրանսպորտում արագաթռիչ ինքնաթիռների կառավարումը, տիեզերական հրթիռների թռիչքները, ինչպես նաև սպորտի ձևերի մեծ մասը: Գործունեության վերոհիշյալ ձևերում մարդուն, նրա հոգեբանական ֆունկցիաներին սկսում են ներկայացվել որակապես այլ պահանջներ: Այդ պայմաններում աշխատանքային գործողությունների հաջող կատարումը զգալի չափով կախված է որոշ բնական առանձնահատկությունների առկայությունից, որոնց հիմքի վրա ձևավորվում է նրանց պիտանիությունը տվյալ մասնագիտության համար:

Նման հատուկ իրադարձություններում, նշում է Վ.Դ. Նեբիլիցինը, անհատի նյարդային համակարգի նշանակությունը զգալիորեն բարձրանում է: Նյարդային համակարգի հատկությունները դառնում են այն հիմքը, որը հիմնականում որոշում է անհատի այս կամ այն գործունեության համար պիտանի լինելը կամ չլինելը և էապես ազդում է դրա վերջնական արդյունավետության վրա:

Այդ կապակցությամբ ուշադրության են արժանի Կ.Մ. Գուրկիչի ուսումնասիրությունները, որոնց մեջ նշվում է, որ աշխատանքի բարդ հուսալիության և անվթարայնության օպերատորական գործունեության մեջ հասնում են ուժեղ նյարդային համակարգ ունեցող մարդիկ: Ինչպես նշում է հեղինակը, աշխատանքային գործունեության նման ձևերում նյարդային համակարգի թուլությունը հակացուցված է: Սպորտային գործունեությունը, մանավանդ մեծ մասշտաբի սպորտային մրցումները, որոնք անցնում են հաջող արդյունքի համար ախտյանների ուժեղ մրցակցության պայմաններում, հանդիսանում են, ըստ Ա.Յ. Պունիի տվյալների, սթրես-գործոններ, որոնք ոմանց մոտ խթանում են հաջող գործունեությունը, իսկ մյուսների մոտ ճնշում:

Ուսումնասիրելով ուժեղ և թույլ նյարդային համակարգ ունեցող անձանց սպորտային գործունեության առանձնահատկությունները գրգռման նկատմամբ հուզական լարվածության տարբեր աստիճանի պայմաններում, Վ.Ա. Վյատկինը հանգում է այն եզրակացությանը, որ մրցումների պայմանները թույլ նյարդային համակարգ ունեցող անձանց մոտ առաջացնում են տազնապ և գործունեության արդյունքների զգալի վատթարացում: Նույն պայմաններում ուժեղ նյարդային համակարգ ունեցողների գործունեությունը, ընդհակառակը, լավանում է: Նկատելի հուզական լարվածության բացակայության պայմաններում (մարզական պարապմունքների ժամանակ) թույլերը քիչ են տարբերվում ուժեղներից:

Համերաշխվելով վերոհիշյալի հետ, Վ.Ա. Մեռլինը գրում է. «Որոշ դեպքերում անհատական ոճի օգտագործումը սահմանափակվում է կամ ընդհանրապես անհնարին դառնում շնորհիվ գործունեության խիստ պահանջների, որոնք ներկայացվում են կատարման ձևերին և եղանակներին»¹⁵: Այսպիսով, աշխատանքում հաջողության ապահովումը հնարավոր է դառնում միայն անհատի միանգամայն որոշակի և յուրահատուկ հատկությունների, կատարման սահմանափակ եղանակների օգտագործման հաշվին: «Գործողությունները վթարային իրավիճակում պահանջում են ուշադրության, հույզերի, կամքի այնպիսի հատկություններ, - գրում է Վ.Ա. Մեռլինը, - որոնք հատուկ չեն թույլ նյարդային համակարգ ունեցող մարդկանց համար և որոնք

¹⁵ Мерлин В.С., Климов Е.А. Формирование индивидуального стиля, деятельности в процессе обучения. - Советская педагогика, 1967, № 4.

չեն կարող փոխհատուցվել անհատական ոճով»¹⁶:

Նման լարված պայմաններում անհատը պետք է բացարձակորեն պիտանի լինի պահանջներին, որպեսզի ապահովվի գործնական խնդիրների հաջող լուծումը: Յետևաբար, մասնագիտական ընտրությունը և մասնագիտական կողմնորոշումը հանդիսանում են այն անհրաժեշտ ձևերը, որոնք ապահովում են օբյեկտիվ պահանջներին անհատի օպտիմալ համապատասխանությունը:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է ասել հետևյալը. օբյեկտիվ պայմաններին անհատի հաջող ընտելացման յուրահատուկ տարբերակները հնարավոր են ինչպես մտավոր, այնպես էլ մոտորային գործողություններում, ընդ որում փոխադարձ համապատասխանություն կարող է հաստատվել տարբեր ճանապարհներով: Եթե աշխատանքային ուսումնական կամ սպորտային գործունեության օբյեկտիվ պահանջները գտնվում են բարենպաստ հարաբերակցության մեջ մտավոր հոգեբանական առանձնահատկությունների հետ, ապա հաջողության հասնելը կապվում է դրական հարմարվողական հնարավորությունների առավելագույն օգտագործման հետ:

Այն դեպքում, երբ բնությամբ պայմանավորված անհատի հատկությունները չեն համապատասխանում արտաքին պահանջներին (պայմանով, եթե արտաքին գործոնները չափազանց խիստ չեն), մարդը ստեղծում է գործունեության յուրահատուկ ձևերի և եղանակների մի ամբողջ համակարգ, որը փոխհատուցում է հատկությունների բացասական դրսևորումները և հնարավորություն տալիս հասնելու որոշակի դրական արդյունքների: Տվյալ դեպքում անհատական ներգործության արդյունավետ ճանապարհը կայանում է ոչ թե բարձրագույն նյարդային գործունեության տիպի հատկությունների «վերադաստիարակմանը» ձգտելու մեջ, որը կնշանակի հարմարեցնել մարդկանց առանձնահատկությունները մի ինչ որ ընդհանուր տիպարի, այլ նրանում, որ հենվելով անձի առաջատար կայուն որակների վրա, նպաստել գործունեության այն ձևերի և եղանակների ձևավորմանը, որոնք առավել հարմար կլինեն նրանց համար և կհամապատասխանեն վառ կերպով արտահայտված առանձնահատկություններին: Երբ արտաքին պայմանները բավականին խիստ են

¹⁶ Мерлин В.С. Психологические основы воспитания сдержанности. – Советская педагогика, 1969, №11-12.

լինում, հնարավոր չի լինում ծրագրավորել առաջիկա գործունեությունը, և կատարվող գործողության հաջողությունը կախված է լինում գործողությունների խիստ որոշակի հնարներից, պահանջվում է բացարձակ (տիպաբանական պայմանավորված) պիտանիություն մասնագիտության կամ գործունեության վերաբերյալ: Այդ դեպքերում մնում է միայն մեկ հնարավորություն՝ արտաքին պահանջների հետ մարդու փոխհամապատասխանությունը որոշելու համար իրականացնել մասնագիտական, սպորտային ընտրություն և կողմնորոշում:

ՇԱՐԺՈՒՆ ԵՎ ԻՆԵՐՏ ՏԻՊԵՐԸ` ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԵՋ

Բուն շարժունության (հակադիր գործընթացների փոփոխման նվազ արագությունը), ինչպես նաև լաբիլության թույլ արտահայտվածությունը (գրգռման և արգելակման առաջացման և դադարեցման նվազ արագությունը), այսինքն նյարդային գործընթացների *իներտությունը* կարող է ունենալ ինչպես բացասական, այնպես էլ դրական նշանակություն: Իներտության բացասական կողմը դրսևորվում է նյարդային գործընթացների դանդաղեցված ընթացքի, իսկ դրականը՝ նյարդային գործընթացների պահպանման երկարատևության, կայունության մեջ: Համապատասխան հոգեբանական տարբերությունները պայմանավորում են, առաջին հերթին, գործունեության ընթացքի առանձնահատկությունները, այլ ոչ թե նրա արդյունավետությունը:

Այդ առումով բնորոշ պատկեր ի հայտ եկավ, երբ ուսումնասիրվում էին ավելի շարժուն և ավելի իներտ խառնվածքներ ունեցող 7-րդ դասարանի աշակերտների միջև եղած տարբերությունները սկզբնական աշխատանքային հմտությունների յուրացման ժամանակ: Պարզվեց, որ եթե շարժուն աշակերտների արժեքավոր հատկությունը տարբեր առաջադրանքների կատարման արագ տեմպն է, ապա բացասականը՝ որոշ անհուսալիությունը (առաջադրանքի որոշ տարրերի բացթողում՝ կատարման ավելորդ սրընթացության պատճառով): Այն առաջադրանքները, որոնք պահանջում էին դանդաղ շարժումներ, ավելի հաջող, հավասարաչափ և սահուն էին կատարվում *իներտ* աշակերտների կողմից: Ծիշտ է, վերջիններս առաջադրանքը կատարում էին փոքր ինչ ուշացումով, սակայն նրանց արժա-

նիքը՝ կատարման ճշգրտությունն էր: Նրանց զգալի մասը արագ գործելու իրենց համեմատաբար սահմանափակ հնարավորությունները փոխհատուցում էր ավելի մեծ ուշադրությամբ ուսուցչի բացատրությունների և գծագրերի հանդեպ:

ԽԱՌՆՎԱԾՔԸ ԵՎ ԱՆՁԻ ՎԻՃԱԿԸ

Ընդունելով, որ խառնվածքն ազդում է ակտիվության բնույթի (աշխատունակության, հաղորդակցման կամ սոցիալական փոխհարաբերության), փոփոխվող պայմաններին հեշտ հարմարվելու վրա, անհրաժեշտ է սակայն, հիշել, որ մարդու վարքի պատկերը կախված է ոչ միայն տվյալ տիպի առանձնահատկություններից, այլև նյարդային համակարգի վիճակից, որը իր հերթին կախված է կյանքի հանգամանքներից և ազդեցություններից: Երբեմն կարելի է նկատել, թե ինչպես հանգիստ, հավասարակշռված ֆլեգմատիկը հայտնի հանգամանքներում հանկարծակի «բռնկվում է» և հուզական առումով իրեն պահում խուլերիկի նման, իսկ վերջինս, նույնպես որոշակի հանգամանքներում իրեն դրսևորում է որպես մեղանխուլիկ. ունենում է ճնշվածության, անվստահության զգացում և այլն: Նման դիտումները որոշ հոգեբանների հանգեցրին այն եզրակացության, որ գոյություն ունեն խառը խառնվածքներ: Իսկ հոգեբաններից ոմանք էլ գտնում են, որ այդ կարծիքը չի կարելի համարել լիովին հիմնավորված և ավելի ճիշտ կլիներ խոսել միջանկյալ տիպերի մասին:

Թեև նույն մարդու վարքի պատկերները տարբեր վիճակում կարող են տարբեր լինել, անհրաժեշտ է դրանց վերլուծության ժամանակ հաշվի առնել նաև մարդու տիպաբանական առանձնահատկությունները, քանի որ ստեղծվող վիճակները նույնպես բնորոշ են նյարդային համակարգի որոշակի տիպերի համար: Այսպես, խուլերիկի համար բնորոշ է վերելքի կամ աֆեկտիվության, ֆլեգմատիկի համար՝ հանգիստ զսպվածության, մեղանխուլիկի՝ անվստահության վիճակը և այլն:

Չետևաբար, այդ վիճակը հանդիսանում է մարդու տիպաբանական առանձնահատկությունների հատկանիշ: Իսկ այն դեպքերում, երբ մարդը ազդեցություններին հակազդում է ոչ բնորոշ կերպով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բուն ազդեցության բնույթի վրա, և այդ ժամանակ կպարզվի, որ այդ ոչ բնորոշ հակազդումը

միանգամայն տիպիկ է: Այսպես, խոլերիկը ամեն անգամ բռնկվում, զայրանում է՝ հենց որ նրան դիտողություն են անում, մանավանդ, եթե այդ դիտողությունը դիպչում է նրա ինքնասիրությանը: Ֆլեգմատիկը, ընդհակառակը, հանգիստ ընդունում է եզակի դիտողությունը, բայց եթե այն (կամ նույնիսկ հասցեին ասված կատակը) կրկնվում է մի քանի անգամ, ապա գալիս է մի պահ, երբ ազդեցությունը կուտակվում է, առաջացնելով զայրույթի բռնկում՝ իր ուժգնությամբ հավասար խոլերիկի բռնկմանը:

Կարելի է ենթադրել, որ խոլերիկի համար բնորոշ է էներգիայի արագ, անմիջական լիցքաթափումը, մինչդեռ ֆլեգմատիկը հավաքում, կուտակում է և լիցքաթափումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ գրգռման գործընթացը սկսում է հաղթահարել ուժեղ արգելակումը:

Նույնը կարելի է ասել նաև ճնշվածության և անվստահության վիճակի մասին: Խոլերիկի մոտ այն առաջանում է ուժեղ գերհոգնածության հետևանքով, երկարատև և լարված գործունեությունից հետո, մինչդեռ մելանխոլիկի մոտ այդ նույն վիճակն առաջանում է կարճատև լարվածության դեպքում կամ կյանքում շփման հանգամանքների արմատական փոփոխման պայմաններում:

Այս ամենը անհրաժեշտ է գիտենալ և հաշվի առնել՝ հասկանալու համար մարդու խառնվածքի առանձնահատկությունները:

ԳՐԾՈՒՆԵՌԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՌՆՎԱԾՔ

Ինտելեկտուալ ընդունակությունների մակարդակի և խառնվածքի տիպի միջև կախվածության հարցին պատասխանելու նպատակով կատարվող հետազոտությունները ցույց են տվել, որ մտավոր ընդունակությունների բարձր մակարդակ ունեցող անձինք կարող են ունենալ ամենատարբեր խառնվածքներ, իսկ նույն խառնվածք ունեցող անձինք՝ դրսևորել մտավոր ընդունակությունների ամենատարբեր մակարդակներ: Խառնվածքի առանձնահատկությունները, իհարկե, դրսևորվում են նաև մտավոր աշխատանքում՝ այնպիսի բնութագրումներում, ինչպիսիք են մտավոր գործողությունների արագությունը, սահունությունը, ուշադրության կայունությունը և փոխանցումը, աշխատանքի մեջ ներգրավվելու դինամիկան, հուզական ինքնադեկավարումը աշխատանքի ընթացքում, նյարդային

լարվածության և հոգնածության այս կամ այն աստիճանը: Սակայն խառնվածքի հատկությունները, յուրօրինակություն հաղորդելով գործունեության ձևին ու ոճին, չեն կանխորոշում մարդու մտավոր հնարավորությունները: *խառնվածքի առանձնահատկությունները պայմանավորում են աշխատանքի միջոցներն ու եղանակները և ոչ թե ձեռքբերումների սակարդակը: Իրենց հերթին, մարդու մտավոր հնարավորությունները պայմաններ են ստեղծում խառնվածքի թերությունները փոխհատուցելու համար:*

Որպես օրինակ, բերենք որոշ տվյալներ դպրոցը ոսկե մեդալով ավարտած նույն 10-րդ դասարանի երկու աշակերտների՝ Ա-ի և Պ-ի բնութագրերից (ըստ Ա.Վ. Պետրովսկու): Նրանք երկուսն էլ միշտ սովորել են ջանասիրությամբ, խանդավառությամբ մասնակցել են դպրոցի հասարակական կյանքին, իսկ դպրոցն ավարտելուց հետո որոշել են ընդունվել համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ: Տարիների ընթացքում նրանք մեծացել ու զարգացել են միասին: Բայց, այնուամենայնիվ, նրանք չափազանց տարբեր էին:

Ա-ն շատ ակտիվ էր, միշտ գործունյա, նրա մոտ հնարավոր չէր նկատել թուլացածության վիճակ, ընդհատումներ պարապմունքներում: Ամենատարբեր հանգամանքների բարդությունը և փոփոխականությունը չեն թուլացրել նրա եռանդը, նա կարող էր միաժամանակ կատարել մի քանի գործ:

Պ-ի մտավոր գործունեությունը ընթանում է այլ կերպ. յուրաքանչյուր առաջադրանքը, նույնիսկ ամենապարզը, նրանից պահանջում էր նախապատրաստություն և խորհրդածումներ: Ամեն մի փոքր արգելք, աննախատեսելի հանգամանք երկար ժամանակով իր վրա էր հրավիրում նրա ուշադրությունը: Դրա պատճառով հանձնարարությունների կատարումը Պ-ի մոտ շատ երկար էր տևում: Նրա աշխատունակությունն արագ էր ընկնում: Ուսումնական օրվա ավարտին դպրոցում Պ-ն ուժեղ հոգնում էր և նրան անհրաժեշտ էր կամ քնել կամ էլ առնվազն մեկժամյա հանգիստ ունենալ՝ մտավոր աշխատանքի համար ուժերը վերականգնելու նպատակով: Մինչդեռ, Ա-ն, որ ի տարբերություն Պ-ի, միշտ գործում էր ինտենսիվ կերպով, ունակ էր հանգստանալու ամենակարճ ժամանակահատվածում: Նրա ճանապարհը դպրոցից տուն, կարճատև խոսակցությունը կողմնակի թեմայով և ամենակարևորը՝ զբաղմունքի փոփոխումը, բավական էին որպեսզի վերականգնվեն նրա ուժերը:

Պատանիների մտավոր աշխատանքի առանձնահատկություն-

ների բնորոշ տարբերությունը նկատվում է նաև նրանց ունեցած մոտեցումներում նոր նյութի յուրացման և անցածի կրկնության նկատմամբ: Այստեղ արտահայտիչ կերպով առաջ է գալիս յուրաքանչյուր աշակերտի մտավոր յուրօրինակությունը: Ա-ն մեծ ուշադրությամբ է լսում նոր նյութի բացատրությունը: Դասագրքի ընթերցանությունն ամենամեծ բավականությունն է պատճառում նրան այն ժամանակ, երբ նա կարդում է գիրքը առաջին անգամ: Հենց նորի յուրացման բարդությունն է, որ հաճույք է պատճառում, աշխուժացնում նրան: Իսկ անցածի կրկնությունը (թեմայի վերջում, քառորդի կամ ուսումնական տարվա վերջում) դրական լիցքեր չի առաջացնում նրա մոտ, կրկնության դասերի ժամանակ նա հակված է զբաղվել կողմնակի գործերով: Պ-ի մոտ պատկերը հակառակն է. նրան հատկապես դուր է գալիս կրկնությունը: Նորը հետաքրքրություն է առաջացնում, իհարկե, նաև նրա մոտ, նա լուրջ և հետաքրքրասեր աշակերտներից մեկն է, բայց նրա համար նորի յուրացումը միշտ հոգնեցուցիչ է: Նա չի կարող Ա-ի նման այդքան լարված, առանց ուշադրությունը թուլացնելու հետևել բացատրություններին: Ժամանակ առ ժամանակ նրան հարկավոր է թուլացնել ուշադրությունը, շեղվել, հանգստանալ: Բացի դրանից, նա ընդունակ չէ միանգամից առանց նախապատրաստվելու արագ ըմբռնել նյութը, նրան հարկավոր է նախապես ընտելանալ նյութին, որպեսզի հանգի համապատասխան եզրակացության: Այդ պատճառով, նոր նյութի բացատրության ժամանակ նա փոքր ինչ շփոթված է: Նոր փաստերը, նոր խոսքերը, նոր ուղղությունները, մտքի նոր ընթացքը ստիպում են նրան անհանգստանալ և հուզվել, ինչը արգելակում է նրա ակտիվությունը: Այլ կերպ է նա պահում իրեն կրկնության դասերի ժամանակ: Նա արդեն ընտելացել է հին նյութին, յուրացրել է այն և այժմ իրեն դրության տեր է զգում: Տիրապետելով փաստերին, գաղափարներին և մտքի որոշակի զարգացումներին, նա կարող է զարմացնել դատողությունների պարզությամբ և ճշտությամբ, ձևակերպումների վստահությամբ և գիտակցումով:

Դիտումների նյութերը, ծանոթությունը պատանհների կենսագրության հետ հնարավորություն են ստեղծում որոշ եզրակացություններ անել նրանց խառնվածքի մասին: Ա.-ն, ըստ երևույթին, մոտիկ է նյարդային գործունեության ուժեղ անհավասարակշռված տիպին, նրա մոտ նկատվում են խոլերիկ խառնվածքի գծեր: Իսկ Պ.-ն, ավելի շատ, թույլ տիպ է, նրա մոտ նկատվում են մելանխոլիկ խառն-

վածքի գծեր: Բավականին նշանակալից և ուսանելի է այն, որ նյարդային համակարգի թուլությունը չի խանգարել նրան դառնալու ամենալավ աշակերտներից մեկը, զարգացնելու իր մտավոր ընդունակությունները, դպրոցն ավարտել ոսկե մեդալով: Պ-ն հաճախ զարմացրել է իր դատողությունների հասունությամբ, պատասխանների հստակվածությամբ: Նրա մտավոր աշխատանքի որոշ դանդաղեցվածությունը ունի նաև իր դրական կողմը, որը կայանում է մտածողության խորության և հետևողականության մեջ: Վերջին հաշվով Ա-ի գերազանցությունը Պ-ի նկատմամբ հարաբերական է: Իհարկե, հակազդումների արագությունը և հեշտությամբ նոր մտավոր ծանրաբեռնվածության անցնելը արժեքավոր հատկություն է, բայց Ա-ն կարծես միանգամից դրսևորում է իր մաքսիմալ կարողությունները, իսկ Պ-ն դանդաղորեն և անվստահ կերպով շարժվելով դեպի իր առջև ծառայած խնդիրների լուծումը, տևականորեն կանգ առնելով նույն հարցերի վրա, ընդունակ է աստիճանաբար ավելի պարզ, ստույգ, առավել լիարժեք և ճշգրիտ կերպով կողմնորոշվել հիմնահարցում: Պ-ի մտավոր աշխատանքը քանակական տեսակետից այնքան էլ արդյունավետ չէ, բայց որակական տեսակետից նրա ձեռքբերումները չեն զիջում Ա-ի ձեռքբերումներին, որոշ դեպքերում նույնիսկ գերազանցում են:

Խոսելով բարձրագույն նյարդային գործունեության այս կամ այն տիպի մասին, պետք է հաշվի առնել նաև այն, որ մարդը, լինելով հասարակության անդամ, հենվում է հասարակական փորձի վրա և գիտակցաբար կարգավորում իր գործունեությունը: Նյարդային համակարգի թուլությունը որոշ դեպքերում պահանջում է լրացուցիչ ջանքեր և առավել բարձր կազմակերպվածություն նշված նպատակներին հասնելու համար, սակայն հիմնահարցերի լուծումը, որի համար թույլ տիպը մոբիլիզացնում է իր բոլոր ուժերը, կարող է կատարվել ամենաբարձր մակարդակով: Մարդը կարող է եպես թույլ լինել, սակայն դա նրան չի զրկում, համապատասխան պայմանների առկայության դեպքում (առաջին հերթին, դաստիարակության և ինքնադաստիարակության շնորհիվ) հասարակության ակտիվ անդամ դառնալու հնարավորությունից:

Նորագույն հետազոտությունների տվյալների համաձայն, ինչպես նշվեց վերևում, նյարդային գործունեության տիպի թուլության հասկացությունը զուտ բացասական չէ և չի նշանակում միայն ուժի պակասություն, այլ ունի նաև որոշակի դրական բովանդակություն:

Թույլ նյարդային համակարգը՝ բարձր զգայունության համակարգ է, և ունի իր հատուկ արժանիքները: Մանկավարժական տեսակետից այն, ուրեմն, չի կարող դիտվել որպես ցածր մակարդակի համակարգ՝ համեմատած ուժեղ նյարդային համակարգի հետ:

Խառնվածքի որոշ հատկություններ, ինչպիսիք են ակտիվության և շարժունակության մակարդակները, կարող են բավականին հակասական ազդեցություն գործել աշխատանքային գործունեության հաջող ընթացքի վրա: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես են օգտագործվում այս կամ այն դինամիկ գծերը: Այսպես, նվազ հոգեկան ակտիվությունը հաճախ փոխհատուցվում է աշխատանքի բարձր մանրակրկիտությամբ: Խառնվածքի առանձնահատկությունները սովորաբար իրենց են հարմարեցնում ուսումնական պարամունքների միջոցները, ռեժիմը (պայմանակարգը): Անկասկած, ցանկացած խառնվածքի տիպ յուրովի կարող է ապահովել բարձր ուսումնական և ստեղծագործական հաջողությունների հասնելու ճանապարհի անցումը: Գործունեության կատարման հնարավորությունների տեսակետից խառնվածքի հատկությունները ազդում են գլխավորապես աշխատանքի գործընթացի յուրօրինակության վրա:

Գիտության, արվեստի, տեխնիկայի բնագավառում, աշխատանքի ամենատարբեր ձևերում կարելի է հանդիպել անվանի մարդկանց տարբեր խառնվածքի տիպերի: Ռուս և հայ անվանի գրողներից, օրինակ, մենք կարող ենք նշել Պուշկինի և Չարենցի խուլերիկ խառնվածքը, Նադսոնի և Տերյանի մելանխոլիկ, Գերցենի և Շիրվանզադեի սանգվինիկ, Կռիլովի և Իսահակյանի ֆլեգմատիկ խառնվածքները: Ընդ որում, ստեղծագործական անձի համար միշտ բնորոշ է աշխատանքի ձևերի անհատականացումը, երբ գիտակցաբար, իսկ մասամբ նաև ինքնաբերաբար օգտագործվում են գործունեության կատարման հատուկ այնպիսի կանոնակարգ և եղանակներ, որոնք համապատասխանում են տվյալ անհատական խառնվածքին:

Սակայն, ասելով, թե գոյություն չունեն «լավ» և «վատ» խառնվածքներ, թե խառնվածքը չի որոշում մարդու սոցիալական արժեքը, թե նրանից կախված չեն մարդու հակումները, աշխարհայացքը, հանդուժանքները և հետաքրքրությունների բովանդակությունը, մենք, դրա հետ մեկտեղ, չենք կարող չընդունել, որ գործունեության որոշ ձևերում խառնվածքի հատկություններից կարող է կախված լինել ոչ միայն դրանց կատարման ընթացքը այլ որոշ չափով նաև արդյունքը: Նկատի ունենալով գործունեության այդ ձևերը, կարելի է խոսել

անձի առավել և սակավ նպաստավոր դինամիկ գծերի մասին, քանի որ ամեն մի գործունեություն որոշակի պահանջներ է ներկայացնում մարդու հոգեկանին և նրա դինամիկ առանձնահատկություններին: Քննիչի մասնագիտությունը, օրինակ, պահանջում է քննչական գործունեության ընթացքում առաջին հայացքից նույնիսկ ամենաանցանց թվացող փոփոխություններին հակազդելու կարողություն ճիշտ և արագ որոշումներ կայացնելու ընդունակություն: Կարգապահությունը դասարանում պահանջում է, որպեսզի աշակերտը կարողանա զսպել իր զգացմունքները և ցանկությունները: Այդ պահանջները չի կարելի ինքնակամորեն փոխել, քանի որ դրանք կախված են օբյեկտիվ պատճառներից՝ գործունեության բովանդակությունից:

Աշխատանքի և ուսման բնագավառներում, որտեղ բավականին խիստ պահանջներ են ներկայացվում գործողությունների տեմպին կամ ինտենսիվությանը, հոգեկանի դինամիկ դրսևորումների անհատական առանձնահատկությունները կարող են դառնալ գործոններ, որոնք ազդում են այդ գործունեության վրա: Հասկանալի է, որ գործունեության տարբեր ձևերում խառնվածքի դերը միանման չէ: Ուսումնական գործունեության մեջ և այսպես կոչված մասսայական մասնագիտություններում (խառատ, փականագործ, ջուլիակ, էլեկտրիկ, գործակատար, հաշվապահ, բժիշկ, ուսուցիչ, ինժեներ և այլն) խառնվածքի որոշ գծեր, որոնք անհրաժեշտ են հաջող գործունեության համար և թույլ են արտահայտված տվյալ մարդու մոտ, կարող են փոխհատուցվել նրա ուրիշ հատկությունների և դրանցով պայմանավորված աշխատանքի եղանակի հաշվին: Օրինակ, իներտ տիպի ջուլիակուհի-բազմահաստոցայինները, որոնց ուշադրությունը շատ կայուն է, աշխատանքի ընթացքում հազվադեպ են շեղվում գործից: Այն իրավիճակում, երբ հարկավոր է լինում վերացնել հաստոցների պարապուրդը կամ կայցնել կտրված թելը, դա դրական հատկություն է: Շարժուն տիպի ջուլիակուհիները, որոնց ուշադրությունը այնքան էլ կայուն չէ, ավելի հաճախ են անցնում մեկ հաստոցից մյուսը, քան դա անում են իներտ տիպի ջուլիակուհիները: Հնարավոր անսարքությունների դեպքում դա նույնպես դրական հատկություն է: Այսպիսով, ուշադրության հաճախակի տեղի ունեցող փոխանցումը փոխհատուցում է ուշադրության անկայունությունը, քանի որ այդ աշխատավորուհիները ավելի արագ են հայտնաբերում անսարքությունները (Ե.Ա. Կլիմովի հետազոտությունը): Հետևաբար, մասսայական

մասնագիտություններում և ուսման մեջ խառնվածքի հատկությունները, ազդելով գործունեության վրա, վերջին հաշվով չեն որոշում նրա արդյունավետությունը, քանի որ մի հատկությունը կարող է փոխհատուցվել մեկ ուրիշ հատկության հաշվին:

Սակայն, որոշ մասնագիտություններում դինամիկ հատկություններին ներկայացվող պահանջները այնքան բարձր են, որ անհրաժեշտ է դառնում նախապես ընտրել մարդկանց ըստ այդ հատկությունների: Այնպիսի մասնագետների համար, ինչպիսիք են մեծ էներգոհամակարգի հերթապահը, միջազգային կարգի մարզիկը, լեռնափրկարարը, վարորդը, բարձրահարկ շենքեր կառուցող մոնտաժողը, փորձարկող օդաչուն, տիեզերագնացը և այլն, որոնց գործունեությունը կապված է մշտական արտակարգ լարվածության, ռիսկի, վտանգի, մեծ պատասխանատվության հետ, տեխնիկային ներկայացվող պահանջների մակարդակը շատ բարձր է: Խառնվածքի այնպիսի հատկություններ, ինչպիսիք են բարձր տանգապալիությունը, արգելքները դիմակայելու նվազ կարողությունը, չեն կարող փոխհատուցվել այլ հատկություններով: Նյարդային համակարգի շարժուն և ուժեղ տիպ պետք է ունենալ նաև կասկադորների, կրկեսային արվեստի և նման այլ մասնագիտություններին տիրապետելու համար: Հուզական գրգռականությունը, որպես խառնվածքի կողմ, անհրաժեշտ է դերասանի, երաժշտի գործունեության մեջ: Վերոհիշյալ մասնագիտություններում խառնվածքի հատկությունները որոշում են մարդու մասնագիտական պիտանիությունը: Աշխատանքի այս ձևերում անհրաժեշտ է նախապես կատարել մարդկանց ընտրությունը, ըստ որոշ հատկությունների, որպեսզի խառնվածքի առանձնահատկությունները նպաստեն գործունեության պահանջներին: Գործունեության պահանջներին խառնվածքի հարմարեցման այս ճանապարհը իրականացվում է, ինչպես արդեն նշվեց վերևում, *մասնագիտական ընտրության* միջոցով:

Խառնվածքի յուրաքանչյուր հատկությունը պահանջում է աշխատանքի անհատական ձևեր: Հայտնի է, որ մելանխոլիկը արագ է հոգնում, այդ պատճառով նրան անհրաժեշտ է հանգստանալու համար ընդմիջումներ անել ավելի հաճախ, քան ուրիշներին:

Խառնվածքից է կախված նաև անձի հուզական բնագավառը, այստեղից է գալիս կարգապահական ազդեցությունների արդյունավետությունը (օրինակ, պատժի կամ խրախուսանքի) կամ շարժառիթի դրդիչ ուժը:

խառնվածքից է կախված լարված իրավիճակի, հուզական գործոնների, մանկավարժական ազդեցությունների հետևանքով առաջացող տարբեր հոգեկան վիճակների ներգործությունը աշխատանքի և ուսման գործընթացի վրա:

Ապացուցված է, որ գործունեության ֆունկցիոնալ մակարդակի բարձրացումը կամ իջեցումը որոշվում է հոգեմյարդային լարվածությունն առաջացնող գրգռիչի մեծությամբ: Գրգռիչի մեծությունը, որի դեպքում ֆունկցիոնալ մակարդակը բարձրանում է, ընդունված է անվանել *օպտիմալ*, որի դեպքում իջնում է *պեսիմալ* մակարդակը: Գործող գրգռիչի օպտիմալ և պեսիմալ մեծությունները կախված են նյարդային համակարգի տիպից և խառնվածքից: Օրինակ, ուժեղ նյարդային համակարգ ունեցող խառատ-կարգավորիչների մոտ նրանց կողմից սպասարկվող չորս հաստոցներից երկուսի կամ մեկի պարապուրդի դեպքում զգալիորեն լավանում են գործունեության որոշ ցուցանիշներ, իսկ թույլ նյարդային համակարգ ունեցող բանվորների մոտ միայն մեկ հաստոցի պարապուրդը առաջացնում է ցուցանիշների վատթարացում: Ճիշտ այսպես, աշակերտ-սանգվինիկին ուսուցչի կողմից խիստ ձևով արված դիտողությունը միայն զգաստացնում է, իսկ աշակերտ-մելանխոլիկին երկար ժամանակով հանում է հունից:

Այսպիսով, խառնվածքից է կախված տարբեր գործոնների ազդեցությունը, որոնք որոշում են հոգե-նյարդային լարվածության մակարդակը (օրինակ, գործունեության գնահատումը, աշխատանքի տենայի արագացումը, հուզածին գրգռիչների ազդեցությունը, աշխատանքի դժվարությունները, կարգապահական ազդեցությունները և այլն):

Գործունեության նման կարգավորումը գործող գրգռիչների մեծության դիֆերենցման միջոցով (նայած նյարդային համակարգի տիպին և մարդու խառնվածքին) կիրառվում է, ճիշտ է՝ հաճախ ինքնաբերաբար, արտադրության լավ կազմակերպիչների և վարպետ-ուսուցիչների, մարդկային հոգիների գիտականների կողմից: Հետևաբար, խառնվածքը գործունեությանը հարմարացնելու այս ուղին իրագործվում է մարդու ներկայացվող պահանջների, պայմանների և աշխատանքի եղանակների անհատականացման մեջ (անհատական մոտեցում):

Գոյություն ունի գործունեության պահանջներին խառնվածքի հարմարեցման նաև երրորդ ճանապարհը: Այն կայանում է նրանում,

որ *խառնվածքի բացասական ազդեցությունը հաղթահարվում է գործունեության նկատմամբ դրական վերաբերմունքով և համապատասխան շարժառիթներով*: Օրինակ, աշակերտների բարձր ակտիվություն առաջացնող շատ հետաքրքիր դասի ժամանակ, խուլերիկների զսպվածության աստիճանը պակաս չէ, քան սանգվիհիկների, իսկ մեկնախուլիկների աշխատունակությունն ավելի ցածր չէ, քան ֆլեգմատիկներինը: Պատերազմում զինվոր մեկնախուլիկը, չնայած իրեն հատուկ երկչոտությանը, ցուցաբերում է ոչ պակաս խիզախություն, քան խուլերիկը կամ սանգվիհիկը:

Գործունեության պահանջներին խառնվածքի հարմարեցումը հնարավոր է նաև վերջինիս առանձին հատկությունների վերադաստիարակման (մարզման) միջոցով:

ԽԱՌՆՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՅԱՏԱԿԱՆ ՈՃԸ

Մեկ անգամ ևս վերադառնանք վերոհիշյալ Ե.Ա. Կլիմովի աշխատանքին՝ նվիրված ըստ նյարդային գործընթացների խմբավորված ջուլհակուհի-բազմահաստոցայինների գործունեության ուսումնասիրման հարցերին: Ակնհայտ է դառնում, որ շարժուն ջուլհակուհիների մոտ, որպես աշխատանքի *դինամիկան* և *ոճը* որոշող գործունեության դրական կողմ, հանդես են գալիս ճարպկությունը, շտապ միջամտության անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքային հնարների արագ կատարումը: Դանդաղկոտների համար էլ բնորոշ է շարժումների հավասարաչափությունը, կանխարգելիչ աշխատանքների նկատմամբ մեծ ուշադրությունը, ինչը պայմանավորված է նրանց թույլ գրգռականությամբ, նյարդային գործընթացների իներտությամբ:

Այսպիսով, երկու ջուլհակուհիներն էլ պլանավորում են իրենց գործունեությունը ոչ թե *մի ընդհանուր շաբլոնով, այլ իրենց անհատական առանձնահատկությունները հաշվի առնելով*: Արդյունքում բոլոր ջուլհակուհիներն էլ ապահովում են բարձր նորմեր աշխատանքում, սակայն դրան հասնում են *տարբեր ճանապարհներով և միջոցներով՝ գործունեության մշակված ոճին համապատասխան*:

Աշխատանքի հանդեպ ադապտացիայի յուրօրինակ ճանապարհները որոշվում են նրանով, որ մարդը կամա թե ակամա հիմնվում է այն հատկությունների վրա, որոնք տվյալ իրավիճակում տա-

լիս են ամենամեծ արդյունքը (Մ.Ռ. Շչուկին):

Ինչպես ցույց են տալիս Ն.Ս. Լեյտեսի հետազոտությունները, տիպաբանական հատկությունները էապես արտացոլվում են նաև մտավոր (ուսումնական) գործունեության մեջ: Ուսման մեջ որոշակի հաջողության հասնելը պահանջում է ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ նյարդային համակարգ ունեցող աշակերտից աշխատանքի և հանգստի յուրօրինակ ռեժիմի օգտագործում: Ուսուցման անհատականությունը կայանում է նրանում, որպեսզի ուսուցիչը նպաստի ուսման մեջ հաջող առաջխաղացման համար անհրաժեշտ ճանապարհ գտնելուն, ճանապարհ, որը կբավարարեր արտաքին պահանջներին և առավելագույնս կհամապատասխաներ աշակերտների հոգեբանական առանձնահատկություններին (Ն.Ի. Պետրովա):

Բ.Ն. Յակուբչիկը, ուսումնասիրելով բարձր կարգի մարմնամարզիկի գործունեությունը, բացահայտեց, որ թեև ինչպես շարժուն, այնպես էլ իներտ մարզիկները կարող են հասնել շարժողական առաջադրանքի կատարման բարձր որակի, սակայն, շարժման կառուցվածքում որոշ առանձնահատկությունների պահպանումը պարտադիր է: Նմանատիպ տվյալներ բացահայտվեցին նաև մի շարք այլ հետազոտություններում:

Այսպիսով, մի կողմից, նյարդային համակարգի հատկություններով պայմանավորված անձի բնական առանձնահատկությունների որոշակի կայունությունը և պահպանողականությունը, իսկ մյուս կողմից, նյարդային համակարգի ֆունկցիաների փոփոխատուցման և մարդու միջավայրի հետ հավասարակշռության տարբեր միջոցների հնարավորությունը որոշակի պայմաններ են ստեղծում օբյեկտիվ պահանջների հետ սուբյեկտի հաջող փոխներգործության համար:

Բառի ավելի նեղ իմաստով անհատական ոճ ասելով պետք է հասկանալ գործունեության ձևերի և եղանակների անհատական-յուրօրինակ զուգակցում, որը ապահովում է նրա առավել հաջող կատարումը և հաստատուն կերպով բնորոշում է մարդուն տարբեր պայմաններում:

Աշխատանքի ոճը՝ գործի մեջ մարդու վարքի եղանակների ամբողջությունն է, որն արտահայտվում է նպատակասլացության, հետաքրքրության, աշխատունակության, աշխատանքի տեմպի և արտադրողականության, աշխատանքային գործընթացի ռիթմիկության, աշխատանքի արդյունքի որակի նկատմամբ պահանջկոտության տեսքով:

Ընդ որում, ինչպես ցույց տվեցին հետազոտությունները (Վ.Ս. Մեռլին, Ե.Ա. Կլիմով) անհատական ոճը մարդու մոտ չի առաջանում միանգամից և տարերայնորեն: Անհատական ոճը ձևավորվում և կատարելագործվում է, եթե մարդը ակտիվորեն փնտրում է այն ձևերը և եղանակները, որոնք կարող են օգնել նրան իր խառնվածքին համապատասխան հասնելու լավագույն արդյունքների:

Տվյալ գործունեությունը կատարելու համար խառնվածքի տարբեր տիպերի զուգակցումները կարող են լինել առավել կամ պակաս նպաստավոր (Վ.Ս. Ռուսալովայի հետազոտությունը): Այսպես, օրինակ, խոլերիկի գործունեությունը ավելի արդյունավետ է լինում այն դեպքում, երբ նա աշխատում է ֆլեգմատիկի կամ մելանխոլիկի հետ համատեղ, քան այն դեպքում, երբ նրա գործընկերը լինում է սանգվինիկը կամ, մանավանդ, խոլերիկը: Նման կարգի փաստերը, իհարկե, չեն կրում աքսիոմատիկ բնույթ, բայց ցույց են տալիս, որ չի կարելի գնահատել խառնվածքի այս կամ այն հատկությունների նշանակությունը, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ գործունեության շատ ձևեր իրագործվում են մարդկանց համատեղ ջանքերով:

Սեփական խառնվածքի հատկությունների տիրապետումը և նրանց փոխհատուցումը, գործունեության անհատական ոճի ձևավորումը սկսվում են մանկության տարիներին և ընթանում են ուսման և դաստիարակության ընթացքում:

ԽԱՌՆՎԱԾՔԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Խառնվածքի համեմատաբար պարզ, բնական դրսևորումը մենք կարող ենք դիտել մանկական հասակում: Որքան ավելի տարիքով մեծ է երեխան, այնքան ավելի բարդանում են նրա փոխհարաբերությունները արտաքին աշխարհի հետ, և հետևաբար, նա այնքան ավելի շատ է զգում այդ աշխարհի ազդեցությունը: Խառնվածքի փոփոխվող առանձնահատկությունները կարծես քողարկվում են: Չարգացման ավելի բարձր մակարդակում խառնվածքի արտահայտության դժվարությունը բացատրվում է նաև նրանով, որ խառնվածքի հատկությունները օրգանապես միահյուսվում են բնավորության հատկությունների հետ և դրսևորվում հարաբերության նոր ձևերի մեջ: Այդ պատճառով հաճախ խառնվածքի դրսևորումները ներկա-

յացվում են որպես բնավորության գծեր (ինչը միանգամայն բնական է) և, ընդհակառակը, բնավորության գծերը՝ որպես խառնվածքի առանձնահատկությունների դրսևորում:

Հոգեբանական հետազոտությունները հաստատում են, որ նյարդային գործունեության տիպերը և խառնվածքները կարող են բացահայտվել շատ վաղ տարիքում: Այսպես, Ե.Պ. Երեսը, ուսումնասիրելով երրորդ դասարանցիների (9-10 տարեկան) խառնվածքները, արդեն իսկ գտնում է նրանց մեջ խառնվածքի բոլոր արտահայտված տիպերը:

Վաղ մանկության տարիներին խառնվածքը դրսևորվում է «մաքուր ձևով», քանի որ այն իրենից ներկայացնում է անձի հակազման հիմնական ձևը:

Կյանքի ընթացքում տեղի են ունենում անձի կառուցվածքի որակական փոփոխություններ. խառնվածքի որոշ գծեր թուլանում են, իսկ որոշ գծեր՝ ուժեղանում, ինչը, անկասկած, կարող է բերել վարքի որոշ փոփոխման: Որակական վերափոխումների զարգացման այս բարդ գործընթացը, վերջին հաշվով, կախված է անձի ապրելակերպից, դաստիարակությունից և գործունեությունից:

Նյարդային համակարգի գործունեության ֆունկցիոնալ առանձնահատկությունների, որպես խառնվածքի, յուրօրինակ դրսևորման նյութական հիմքի վրա ազդեցություն են գործում կյանքի հանգամանքները (ասենք, հեղափոխության կամ ռեակցիայի դարաշրջանը): Որոշ պայմաններ նպաստում են հոգեկան գործընթացների ընթացքի աշխուժացմանը, դրա ուժի և արագության զարգացմանը, տպավորվողականության և հուզական գրգռվածության ուժեղացմանը: Իսկ որոշ պայմաններ, ընդհակառակն, արգելակում, ճնշում են ակտիվությունը և նպաստում հոգեկան տենպի դանդաղ զարգացմանը:

Նյարդային համակարգի հիմնական հատկությունների դրսևորումներ կարելի է նկատել բոլոր հոգեկան գործընթացներում: Այդ դրսևորումների համապարփակությունը բացատրվում է նրանով, որ նյարդային համակարգի հատկությունները անհատական են, ծագումնաբանորեն պայմանավորված առանձնահատկություններ, որոնք բացահայտվում են հոգեկանի և նրա սուբստրատի՝ ուղեղի գործունեության ընթացքում:

Բարձրագույն նյարդային գործունեության և հոգեկանի ընդհանուր օրինաչափությունները բացահայտվում, իրենց նշանակությու-

նը պահպանում են նյութական սուբստրատի բոլոր անհատական յուրօրինակ տարբերակներում: Բայց կյանքի տարբեր իրավիճակներում, առաջին պլան են դուրս գալիս նրանց տարբերակները, որոնք պայմանավորված են անհատական ժազուճնաբանական առանձնահատկություններով:

Նյարդային համակարգի հատկությունների ինչպիսի՞ դրսևորումների մասին կարող է դատել դաստիարակը՝ հենվելով իր դիտումների վրա: Նախ քննարկենք անհատական հոգեկանի արագընթացիկ առանձնահատկությունները: Ուսուցիչները սովորաբար ուշադրություն են դարձնում այն բանի վրա, թե ինչպիսի տեմպերով են աշխատում աշակերտները: Դա կարելի է նկատել ընդհանուր առաջադրանքների կատարման (ոչ բոլոր աշակերտներն են ժամանակին ավարտում դրանք), բայց ավելի շատ, այսպես կոչված, «պիլոտա-ժային» հարցման ընթացքում: Հարցադրումից հետո ուսուցիչը դիմում է այն աշակերտին, որը պետք է պատասխանի և վերջինս սկսում է պատասխանել առանց որևէ ընդմիջման: Հաճախ պարզվում է, որ ոչ բոլոր աշակերտներն են կարողանում հաջողությամբ հաղթահարել հարցման նման ձևը:

Անկասկած, աշակերտների պատասխանները պայմանավորված են նրանց գիտելիքներով և պատրաստվածությամբ: Բայց կարելի՞ է, արդյոք, եզրակացության գալ, որ ով գիտի և նախապատրաստված է, նա կկարողանա հաջողությամբ պատասխանել հարցին, իսկ ով վատ գիտի՝ կպատասխանի անվստահ, դանդաղ, կամ էլ ընդհանրապես կլռի: Թեև որոշ ուսուցիչներ հենց այդպես են մեկնաբանում աշակերտների վարքի առանձնահատկությունները, դրա հետ համաձայնվել չի կարելի: *Աշակերտի պատասխանի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել նրա անհատական արագաշարժության կարողությունները:* Չնայած դրանք կարող են «քողարկվել» գիտելիքների մակարդակով և այլ գործոններով, սակայն բազմակի դիտումների շնորհիվ տարբեր իրավիճակներում ուսուցիչը կարող է առանձնացնել այդ կարողությունները:

Արագաշարժության կարողությունների բնութագրման ժամանակ պետք է նկատի ունենալ երկու կարգի ցուցանիշներ: Առաջինը՝ շարժումների համեմատաբար արագ տեմպը, արագ հակազդումները արտաքին ազդեցությունների վրա, արագ խոսքը, շփման հակումը, շեղումների հաճախակիությունը միապաղաղ աշխատանքի ժամանակ: Երկրորդ ցուցանիշը՝ փոփոխվող իրավիճակին հարմարվե-

լու հեշտությունն է և արագությունը, դժվարությունների բացակայությունը գործունեության մեկ ձևից մյուսին, խնդրի լուծման մեկ եղանակից մյուսին անցնելու ժամանակ: Առաջին կարգի ցուցանիշները վկայում են նյարդային համակարգի *լաբիլության*, իսկ երկրորդ կարգի ցուցանիշները՝ նրա *շարժունության* մասին: Ուսուցիչները, որ ուշադրությամբ են հետևում իրենց սաներին, անկասկած, կնկատեն, որ այդ երկու հատկությունները ներկայացված են աշակերտների մոտ ոչ հավասար չափով: Բարձր լաբիլություն և շարժունություն ունեցողների կողքին կարելի է նկատել նաև իներտ և ցածր լաբիլություն ունեցող աշակերտներ:

Հոգեբաններ Վ.Պ. Գերասիմովը և Վ.Տ. Կոզլովան հետազոտել են, թե ինչպես են պահում իրենց այդ խմբերի ներկայացուցիչները դասարանում և տնային առաջադրանքներ կատարելու ժամանակ:

Դպրոցականները (ուսումնասիրվել էին չորրորդ դասարանի աշակերտները) նախապես ենթարկվել էին լաբորատոր ախտորոշիչ փորձարկումների: Ցածր լաբիլություն ունեցողների և իներտների խմբին դասված երեխաների մոտ հարցերի կառուցումը կրել է ստերեոտիպ բնույթ, նրանք հակված են եղել օգտագործել առաջադրանքների կատարման եղանակները նաև նոր պայմաններում, ձգտել են տալ գրքային ձևակերպումներ և չեն փորձել ուղղել իրենց սխալ պատասխանները: Այն իրավիճակում, երբ ուսուցիչը արագորեն հարցեր է տվել և երբ այդ հարցերին պետք էր անմիջապես պատասխանել, աշակերտները փորձել են «զցել տեմպը» և ժամանակ շահել՝ մտքերն իմի բերելու համար: Այսպես, նրանք արտասանել են պատասխանի ներածական մասը (կրկնելով հարցի մի մասը), իսկ հետո մի որոշ ժամանակ լռել են և միայն ընդմիջումից հետո տվել հիմնական պատասխանը: Երբ արդեն կարելի էր նախատեսել հարցերի հերթականությունը (օրինակ, եթե ուսուցիչը նախապես գրել էր դրանք գրատախտակի վրա), երեխաները, որոնց հատուկ է նյարդային համակարգի իներտությունը, պատրաստել են ոչ թե տվյալ պահին տրված հարցի պատասխանը, այլ հաջորդ հարցը, որպեսզի ժամանակ շահեն:

Իրենց բոլորովին այլ կերպ են դրսևորում բարձր լաբիլություն ունեցող և շարժուն աշակերտները: Արագ տրվող հարցերի ընթացքում նրանք ժամանակ չեն ծախսում հարցի վերարտադրման վրա, այլ անմիջապես հաղորդում են պատասխանի բուն էությունը: Նրանք զբաղված են միայն այն առաջադրանքների լուծումով, ո-

րոնք ներկայացված են իրենց տվյալ պահին: Սովորաբար նրանք նախապես չեն պատրաստում պատասխանը, այլ ձևակերպում են այն, երբ ուղքի են կանգնում պատասխանելու համար: Դիտումները ցույց են տալիս, որ տնային առաջադրանքների կատարման ժամանակ ցածր լաբիլություն ունեցող և իներտ աշակերտները դժվարություներ են զգում, եթե տարբեր առաջադրանքները մեկ առարկայից պահանջում են կատարման տարբեր եղանակներ, ինչպես նաև այն ժամանակ, երբ մեկ առարկայի առաջադրանքից հարկ է անցնել մի ուրիշ առարկայի առաջադրանքի:

Բարձր լաբիլություն ունեցող և շարժուն աշակերտների մոտ հաճախ միտում է նկատվում, մի առաջադրանքը չկատարած, առանց նկատելի պատճառների անցնել ուրիշ առաջադրանքի, իսկ նոր ապա վերադառնալ չկատարածին: Նրանք աշխատում են շատ արագ, ինչը կարող է բացասական կերպով ազդել աշխատանքի որակի վրա: Նման պարագայում դասագրքերի և տետրերի հետ սեղանին կարող է բաց վիճակում դրված լինել հետաքրքիր գիրք, որը նրանք ժամանակ առ ժամանակ կարդում են: Սակայն, պետք է նշել ևս մեկ հանգամանք: Ծայրահեղ խմբերի ներկայացուցիչների հետ մեկտեղ մեծ խումբ են կազմում լաբիլության և շարժունության միջին մակարդակ ունեցող աշակերտները:

Նյարդային համակարգի հատկությունները կանխորոշված են գենոտիպով: Դաստիարակությունը դա փոխել չի կարող: Այլ բան է, որ աշակերտին կարելի է դաստիարակել այնպես, որպեսզի նա, իմանալով իր բնական առանձնահատկությունները, մշակի ինքնակարգավորման, ինքնակառավարման հմտություններ: Այդ հմտությունները կօգնեն նրան ազատվելու իր հատկությունների այնպիսի դրսևորումներից, որոնք անբարենպաստ կերպով են ազդում գործունեության կոնկրետ ձևի արդյունավետության վրա: Ցածրալաբիլ և իներտ նյարդային համակարգ ունեցող աշակերտներին պետք է խորհուրդ տալ հնարավորինս ավելի հանգամանորեն և լիարժեք պատրաստվել դասերին, որպեսզի անհարմար վիճակի մեջ չընկնեն, երբ անհրաժեշտություն զգացվի շտապ կերպով վերարտադրել հանձնարարված նյութը: Հարկ չկա չափից ավելի շտապողական լինել, որպեսզի աշակերտները չչփոթվեն. ավելի լավ է պատասխանել մի քանի վայրկյան ուշ, բայց ճիշտ: Մյուս կողմից, նրանց բնական առանձնահատկությունները օգնում են աշխատանքի մեջ լինել ավելի հետևողական. չէ՞ որ դա շատ կարևոր հմտություն է: Դրա հետ մեկ-

տեղ նրանք պետք է սովորեն առավել սահուն անցնել մի տիպի առաջադրանքից մյուսին:

Նյարդային համակարգի հակադիր հատկություններ ունեցող աշակերտները պետք է համառոտ մշակեն ինքնավերահսկողության հմտություններ, չբավարարվեն նրանով, որ առաջադրանքը արագ են կատարել, այլ հատուկ ուշադրություն դարձնեն դրա որակի վրա: Այսպիսի աշակերտին պետք է սովորեցնել ինչ-որ մի նորություն գտնել առաջադրանքի կրկնության ընթացքում, որպեսզի այդպիսով հաղթահարվի միապաղաղության զգացումը:

Դեռևս 30-ական թվականներին գերմանացի հոգետեխնիկ Պիորկովսկին ուսումնասիրել է փոստային չինովնիկի աշխատանքը, որը կայանում էր նրանում, որ նա ամբողջ օրվա ընթացքում կնքում էր նամականիշները: Փոստային չինովնիկին հարցնում են, թե արդյոք նրան չի ձանձրացնում նման միապաղաղ աշխատանքը: Չինովնիկը զարմանում է: Ըստ իր կարծիքի՝ նրա աշխատանքում ոչ մի միապաղաղություն չկա. չէ՞ որ յուրաքանչյուր ծրարի դրոշմանիշները միանման չեն կապված, երբեմն միևնույն գումարի սահմաններում փակցված է լինում միայն մեկ, իսկ երբեմն մի քանի դրոշմանիշներ և այլն: Չինովնիկը գտնում է, որ զբաղված է շատ տարաբնույթ աշխատանքով:

Ակնհայտ է, որ արտաքնապես միապաղաղ աշխատանքում ևս կարելի է գտնել շատ տարբեր կողմեր: Ուշադրության գիտակցված ուղղորդումը կատարվող գործի մերթ մի, մերթ մյուս կողմի վրա, եթե ոչ ամբողջովին, ապա զգալի նվազեցնում է միապաղաղության զգացումը: Բարձրալաբիլ և շարժուն աշակերտների մոտ դեպի նորը մշտական ձգտման պատճառով, բավականին դժվար է ձևավորվում սիստեմատիկ աշխատանքի հմտությունը: Նրանց հարկավոր է օգնել այդ հմտությունը ձեռք բերելու գործում:

Շատ կարևոր է նաև հետևյալը. նյարդային համակարգի հատկությունների անհատական տարբերությունները հատուկ են ոչ միայն աշակերտներին, այլև դաստիարակներին: Ուսուցչին, որը հակված է ամեն ինչ արագ անել, անհրաժեշտ է համբերատարություն դրսևորել, երբ գործ ունի իներտ, ցածրալաբիլ աշակերտի հետ: Տվյալ պայմաններում ոչ մի նախատինք կամ պատիժ օգուտ չեն բերի: Աշակերտը, լարելով իր ամբողջ ուժերը, նախ կկարողանա որոշ ժամանակում ավելացնել արագությունը, իսկ հետո կրկին կվերադառնա իր նախկին բնական տեմպին: Ուսուցիչը չպետք է այդ աշա-

կերտի մասին այն կարծիքը կազմի, թե նա ծուլ է, չլսող և անընդունակ: Դանդաղաշարժությունը ամենևին էլ ընդունակության նշան չէ: Ակադեմիկոս Ն.Ն. Լուզինը, որը «մեծ ազդեցություն է գործել մաթեմատիկական գիտության զարգացման վրա ... դանդաղ էր ըմբռնում ամեն ինչ: Նաև դանդաղ զարգանում էր: Դպրոցում վատ էր սովորում, մասնավորապես, մաթեմատիկայից: 20-րդ դարի նշանավոր մաթեմատիկոսներից մեկը՝ Դ.Գիլբերտը, շատերի խոստովանությամբ բթամիտ, ուշ հասկացող մարդու տպավորություն էր թողնում և դժվարությամբ էր ըմբռնում զրուցակցի միտքը»¹⁷:

Իհարկե, բերված օրինակներից չի հետևում այն, թե օժտված մարդիկ միանշանակ դանդաղաշարժ են: Այս օրինակները պարզապես ցույց են տալիս, որ, միանգամայն հնարավոր է որոշակի բնագավառում նյարդային համակարգի հատկությունների նման ներկայացուցչության զուգակցում բարձր օժտվածության հետ: *Դա նշանակում է, որ անհատական մոտեցումը միանգամայն անհրաժեշտ է:* Եթե աշակերտը հանդիպում է այնպիսի ուսուցչի, որը ներկայացնում է պահանջներ, որոնք ինքը, չնայած բոլոր ջանքերին, ի վիճակի չէ կատարել, ապա նա աստիճանաբար կարող է գալ եզրակացության, որ այդ ուսուցչից արդարություն սպասել չի կարելի: Անարդարության ապրումները, որպես կանոն, բերում են ուսման նկատմամբ հետաքրքրության նվազման, ուսուցչի հանդեպ հարգանքի կորստի և այլ անհաճելի հետևանքների:

Նույնպիսի տոկոսություն պետք է ցուցաբերի նաև դանդաղաշարժ ուսուցիչը, երբ նրա որոշ աշակերտներ ցուցաբերում են արագ հակազդելու, հետաքրքրությունների մշտական փոփոխման, առավել մեծ հաղորդակցման հակվածություն: Նման դեպքերում միայն կարգ ու կանոնի պահպանման կոչերով ուսուցիչը քիչ բանի կհասնի: *Դաստիարակի խնդիրը կայանում է նրանում, որպեսզի երեխաներին առաջին հերթին ինքնակարգավորման հմտություններ պատվաստի, ուսումնական գործունեության կազմակերպման այնպիսի հմտություններ, որոնց առկայությամբ նրանց անհատական առանձնահատկությունները կկարողանան դրսևորվել առավել արդյունավետ կերպով:* Իհարկե, ուսուցիչը նույնպես պետք է կարողանա հսկել ինքն իրեն աշակերտի հետ շփվելու ժամանակ:

Այժմ խոսենք նյարդային համակարգի ուժի մասին: Ուսումնա-

¹⁷ Число и мысль, М., 1977, с. 32.

կան գործունեության մեջ ցայտուն կերպով դրսևորվում են նյարդային համակարգի ուժի առկայության անհատական տարբերությունները՝ *դիմացկունություն, աշխատունակություն*։

Նյարդային համակարգի ուժը բավականին ցայտուն կերպով է դրսևորվում աշխատունակության անհատականության մեջ։ Այդուհանդերձ աշխատունակությունը չի կարող ծառայել որպես այդ հատկության միանշանակ ցուցանիշ։ Աշխատունակության նվազումը հաճախ առաջանում է օրգանիզմի ընդհանուր թուլության պատճառով, օրինակ, կրած հիվանդությունից հետո, կամ որպես նյարդային հյուսժման հետևանք՝ (կյանքի անբարենպաստ պայմաններից, երբեմն ուսումնական գործունեությունը կազմակերպելու անկարողությունից ելնելով և այլն)։ Նման դեպքերում անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելուց հետո աշխատունակությունը ժամանակի ընթացքում վերականգնվում է։ Իսկ նյարդային համակարգի ուժը՝ բնական անհատական առանձնահատկություն է։ Դրա բնածին թուլությունը կամ ուժը վերափոխել հնարավոր չէ, բայց փոխելով և կատարելագործելով անձի սովորությունները, կարելի է կարգավորել դրանք։ Նյարդային համակարգի մասին նման եզրակացության էր հանգել Ի.Պ. Պավլովը կյանքի 82-րդ տարում։ Անկասկած, արդարացի էր նաև Բ.Մ. Տեպլովը, երբ ասում էր. «Նյարդային համակարգի յուրաքանչյուր տիպի դեպքում մարդը կարող է ունենալ բարձր հասարակական ձեռքբերումներ»¹⁸։

Նյարդային համակարգի ուժի անհատական աստիճանավորումները հայտնաբերվում են կարճատև, բայց ինտենսիվ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական ազդեցություններին դիմանալու կարողության մեջ։ Եթե մարդուն ինչ-որ բան շշուկով են հաղորդում, բայց դա նրա համար էական նշանակություն ունի, ապա հոգեբանորեն նման ազդեցությունը կարող է ունենալ չափազանց մեծ ինտենսիվություն։ Որքան ավելի թույլ է նյարդային համակարգը, այնքան նվազ ընդունակ է դիմանալու և աղեկվատ ծնով հակազդելու ինտենսիվ ազդեցություններին։ Իսկ եթե ազդեցության ինտենսիվությունը գերազանցում է ըմբռնողի հնարավորությունները, ապա պատասխանը դառնում է ոչ աղեկվատ և իրավիճակը կարող է առաջացնել նյարդային խափանում։

Վերոհիշյալից, սակայն, չի կարելի եզրակացնել, թե իբր նյար-

¹⁸ *Теплов Б.М., Проблемы индивидуальных различий, М., 1961, с. 406.*

դային համակարգի թուլությունը միշտ հանդես է գալիս որպես անհատի բացասական հատկություն, ինչի մասին արդեն ասվել է վերևում: Եվս մեկ անգամ հիշեցնենք, որ Բ.Մ. Տեալովի և Վ.Գ. Նեբիլիցինի աշխատություններով հաստատվել է, որ նյարդային համակարգի ուժը կարող է դիտվել որպես զգայունության հակադիր հատկություն, այսինքն, որքան ավելի թույլ է նյարդային համակարգը, այնքան ավելի բարձր է նրա զգայունությունը, և, ընդհակառակը, նյարդային համակարգի առավել մեծ ուժը համապատասխանում է համեմատաբար ցածր զգայունության: Զգայունությունը բնութագրվում է այն խթանի աստիճանով, որը կարող է առաջացնել նյարդային համակարգի պատասխան հակազդում: Ռեալ կյանքում նյարդային համակարգի ինչպես առավել մեծ ուժը, այնպես էլ առավել բարձր զգայունությունը կարող են վճռական լինել, բայց նայած իրավիճակներին:

Որոշակի հանգամանքներում մարդը իր վարքը կազմակերպելիս ստիպված է լինում հաշվի առել ոչ թե մեկ, այլ մի քանի ազդեցություններ: Հոգեբան Վ.Ի. Ռոժդեստվենսկայան հոգեֆիզիոլոգիական փորձով մոդելավորել է նման հանգամանքները. դրան մասնակցել են թույլ և ուժեղ նյարդային համակարգ ունեցող փորձարկվողներ: Պարզվել է, որ «ուժեղները» ավելի հաջող են կատարում բարդ խնդիրները, քան «թույլերը»¹⁹:

Մի այլ հետազոտության ժամանակ, որը կատարել է Մ.Կ. Ակիմովան «ուժեղ» և «թույլ» փորձարկվողներին առաջարկվել է լուծել տրամաբանական խնդիրներ: Փորձարկվողներին հանձնարարվել է լուծման որոշակի եղանակ՝ հրահանգում նկարագրված աղյուսակային մեթոդ, որը նշված «քայլերի» հետևողական կատարման դեպքում երաշխավորում է խնդրի ճիշտ լուծում: Այդ մեթոդը սովորելու համար «թույլերը» ծախսել են ավելի քիչ ժամանակ, քան «ուժեղները»: Վերջիններս նախընտրել են ժամանակ չծախսել հրահանգի վրա: Նրանք կամ խուսափել են հրահանգում բերված օրինակների վերլուծություններից, պատճառ բերելով այն, թե «առանց այդ էլ ամեն ինչ հասկանալի է» և «ավելի լավ է շուտ սկսել» կամ էլ ինքնուրույն կերպով ձեռնամուխ են եղել այն խնդիրների լուծմանը, որոնք վերլուծվում են ուսումնական հրահանգում բերված աղյուսակային

¹⁹ Типологические особенности высшей нервной деятельности человека, М., 1956, с. 234.

մեթոդով: «Թույլերը» ուշադիր կերպով են վերաբերվել՝ հրահանգին և մանրագնին կերպով վերլուծել բերված օրինակները: Բարդության ցածր աստիճան ունեցող խնդիրների լուծման ժամանակ «թույլերը» գերազանցել են «ուժեղներին», ինչը կարելի է բացատրել նրանով, որ նրանք յուրացրել են աղյուսակային մեթոդը: Բայց խնդիրների բարդության աճի դեպքում, երբ պետք էր հաշվի առնել խնդիրների մեջ ներկայացված տարրերի ամբողջությունը, «թույլերը» չեն կարողացել լուծել խնդիրը՝ նույնիսկ աղյուսակային մեթոդի օգնությամբ: «Թույլերը», դատելով Վ.Պ. Ռոժդենստվենսկայայի փորձից, սահմանափակված են ընկալվող հրատապ տեղեկատվության ծավալի մեջ: Անկասկած, այդ ամենը կախված է նաև հետազոտության կատարման պայմաններից: Հնարավոր է, որ եթե այդ նույն «թույլերին» տրամադրվեր ավելի շատ ժամանակ, եթե նրանց հնարավորություն տրվեր անշտապ կերպով աշխատել տրված խնդիրների վրա, ի վերջո նրանք կսովորեին կատարել բազմաինֆորմատիվ առաջադրանքներ: Բոլոր դեպքերում, «թույլերի» նման առանձնահատկությունը պետք է հաշվի առնվի ուսուցիչների կողմից²⁰:

Ուսուցիչը պետք է նաև իմանա, որ ֆիզիկապես ուժեղ, ամրակազմ դեռահասները և պատանիները միշտ չէ, որ ունենում են ուժեղ նյարդային համակարգ, և ընդհակառակն: Չի կարելի նույնացնել նյարդային համակարգի ուժը ֆիզիկական ուժի հետ: Դրա հետ մեկտեղ նյարդային համակարգի ուժի այս կամ այն աստիճանը իր ազդեցությունն է թողնում մարդու վարքի վրա: «Ուժեղները» միշտ չէ, որ ընդունակ են լինում գնահատել, թե ինչպիսի տպավորություն «թույլերի» վրա կգործեն իրենց համար միանգամայն սովորական թվացող որոշ գործողություններ և արարքներ: Անհատական մոտեցման վրա հիմնված դաստիարակությունը պետք է նման դեպքերում կարևոր դեր կատարի: Հարկավոր է, որպեսզի «ուժեղները» ձեռք բերեն ինքնակարգավորման հմտություններ, որոնք անհրաժեշտ են հաղորդակցման ընթացքում:

Ա.Ի. Մենդելեևսկայի գրքում բերված են դիտարկումներ, ըստ որոնց Դմիտրի Իվանովիչ Մենդելեևը պատկերված է որպես ուժեղ նյարդային համակարգ ունեցող անձնավորություն: Նա աչքի է ընկ-

²⁰ *Акимова М.К.*, Проявление силы нервной системы в результативной стороне некоторых типов интеллектуальной деятельности. — Психологическая диагностика. Ее проблемы и методы. Сборник, М., 1975.

նում մեծ աշխատունակությամբ, միտքը ընդգրկել և միավորել է բազմաթիվ տարբեր հիմնահարցեր, որոնք վերաբերել են ինչպես նրա գիտական հետազոտություններին քիմիայի բնագավառում, այնպես էլ տնտեսագիտությանը, տեխնիկային և այլն: Իսկ ահա դիտարկումներից մեկը, ցույց է տալիս, որ նույնիսկ այդպիսի բարձր կարգի մտավորականը միշտ չէ, որ հաշվի է առել, թե ինչպես են ազդում ուրիշների վրա իր որոշ առանձնահատկությունները: «Նա ոչ մի նշանակություն չէր տալիս իր բղավոցին ... Մի անգամ նա եկավ Պալատ²¹ սովորականից շուտ, ամեն տեղ եղավ և ամենուրեք լսվում էր նրա բղավոցը: Բղավում էր լաբորատորիայում, բղավում էր գրադարանում: Հետո եկավ իր առանձնասենյակը: Այդտեղ պատահամամբ գտնվող էկզեկուտորը²², սարսափահար նայում էր Դմիտրի Իվանովիչին: Իսկ ինքը, ասես ոչինչ տեղի չի ունեցել, նստեց բազկաթռռին և բարեհոգաբար ասաց. «Ա՛յ ինչ են ասել, տրամադրությունս այսօր հրաշալի է»²³:

Դպրոցի պայմաններում թույլ նյարդային համակարգ ունեցող աշակերտներին կարելի է առանձնացնել՝ հաշվի առնելով նրանց գերհոգնածությունը: Հոգնածության հիմքում ընկած է նյարդային կառուցվածքների ֆունկցիոնալ հյուծվածությունը: Հոգնածությունը բնորոշ է բոլոր մարդկանց, որոշ մարդիկ հոգնում են 8-10 ժամ աշխատելուց հետո, իսկ ոմանք՝ նույնիսկ 4-5 ժամից հետո: Իհարկե, հոգնածությունը կախված է տարիքից, աշխատելու սովորությունից, շահագրգռվածությունից և այլն: Սակայն, փաստարկելով անհատական աշխատունակության դինամիկան քիչ թե շատ նման պայմաններում, ուսուցիչը կնկատի, որ տարբեր աշակերտների մոտ այն տարբեր է: Որքան ավելի թույլ է նյարդային համակարգը, այնքան արագ է վրա հասնում հյուծվածությունը, ինչին նպաստում են բարձր ինտենսիվություն ունեցող ազդեցությունները և առավել անսովոր, լարված աշխատանքը՝ ստուգողական աշխատանքները, քննությունները և այլն: Հոգնածության ազդեցության տակ երեխաները գունատվում են, կորցնում աշխուժությունը, վատ են ըմբռնում ուսումնական նյութը, նրանց պատասխանները դառնում են կցկտուր և անտրամաբանական:

²¹ Չափերի և կշեռքների պալատ, որը նա ղեկավարել է:

²² Տնտեսական մասի աշխատող:

²³ Менделеева А. И., Менделеев в жизни, М., 1928, с. 149:

«Թույլերը» չեն գիտակցում իրենց յուրօրինակությունը: Նրանք անհմաստ ծախսում են իրենց եռանդը, ձգտելով ետ չմնալ ուրիշներից, ներգրավվում են մեծ լարում և ակտիվություն պահանջող խաղերի և պարապմունքների մեջ: Դա նշանակում է, որ նրանք դեռևս չեն տիրապետում ինքնակարգավորման հմտություններ:

Այդ աշակերտների վրա խիստ բացասական է ազդում կուպտությունը, անհարգալից վերաբերմունքը, մանավանդ, եթե նման ձևով են վարվում հեղինակություն ունեցող մեծահասակները, այդ թվում նաև ուսուցիչները, ուսմասվարները, տնօրենները: Կուպիտ տոնով արված դիտողությունը, նույնիսկ, եթե այն վերաբերում է աննշան խախտման, կարող է թույլ աշակերտի մոտ առաջացնել արգելակված վիճակ, զրկել նրան այնպիսի հանձնարարություն կամ առաջադրանք կատարելու հնարավորությունից, որը նա հանգիստ վիճակում կհաղթահարեր առանց դժվարությունների: Դրա հետ մեկտեղ «թույլերը» արագ կերպով նկատում են շրջապատող մարդկանց տրամադրության փոփոխությունները, փնտրում են այդ փոփոխությունների պատճառները: Նրանք նրբազգացորեն նկատում են, երբ ինչ-որ մեկը մյուսին վիրավորում է: Կարեկցում են նրան, ով անարդարության գոհ է դարձել, ում հետ դժբախտություն է պատահել: Հաճախ հենց «թույլերն» են ներկայացնում դասարանի խիղճը և դրա համար նրանց հարգում և սիրում են ընկերները:

Նյարդային համակարգի մեծ ուժի և թուլության միջև գոյություն ունեն այդ հատկությունների մի շարք տարատեսակներ: Աշակերտների միայն փոքր խմբեր են մոտենում բևեռներին, նրանց մեծ մասը գտնվում է դրանց միջև ընկած ինչ-որ մի տեղ:

Նախորդ էջերում մենք քննարկեցինք նյարդային համակարգի որոշ հատկություններ, որոնք արդեն ուսումնասիրվել են լաբորատոր պայմաններում: Հենց այդ հատկություններն են բազմիցս գրավել այն գիտնականների ուշադրությունը, որոնք անդրադարձել են անհատական-հոգեբանական առանձնահատկություններին, նրանց դրսևորմանը ուսումնական գործունեության մեջ:

Դաստիարակը, որին հետաքրքրում է իր սաների մոտ վերը նկարագրված նյարդային համակարգի հատկությունների դրսևորումները, հավանաբար չի հասնի նրանց ախտորոշման այնպիսի ճշտության, ինչպես լաբորատոր փորձերում: Բայց այն, ինչ կարող է կիրառել ուսուցիչը՝ երկարատև և նպատակասլաց դիտումներ, զրույց, ստեղծագործության արդյունքների վերլուծություն և այլն,

նույնպես ունեն իրենց դերն ու նշանակությունը: Մասնավորապես, դիտումները կարող են անցկացվել կյանքի ամենատարբեր պայմաններում և նրանց երկարատևության շնորհիվ ուսուցիչը կարող է բազմիցս ստուգել իր ենթադրությունները: Այսպիսով, նա բարձրացնում է եզրակացությունների ճշտությունը: Քանի որ երեխայի հետ կարճատև ծանոթության ժամանակ կարելի է ստանալ միայն առանձին, քիչ թե շատ խոսույն տպավորություններ նրա հոգեկանի դինամիկ կողմի մասին, որոնք, սակայն, բավարար չեն խառնվածքի հատկությունների շուրջ արժանահավատ դատողությունների համար, միայն գիտենալով երեխայի զարգացման պայմանները, համադրելով տարբեր հանգամանքներում նրա վարքի և գործունեության մասին տվյալները, կարելի է տարբերել պատահական վարվելակերպը և սովորությունները խառնվածքի ավելի արմատական գծերից:

Դինամիկ արտահայտությունների յուրօրինակության ուսումնասիրման ձևերից մեկը՝ սաների միմյանց հետ համեմատումն է հնարավորին չափով հավասար պայմաններում: Համոզվելու համար, որ սանը պատկանում է խառնվածքի այս կամ այն տիպին, պետք է առաջին հերթին հաշվի առնել հետևյալ գծերը.

1. *Ակտիվություն:* Այդ մասին կարելի է դատել, ելնելով այն բանից, թե եռանդի ինչպիսի աստիճանով է երեխան ձգտում նորին, աշխատում ազդել շրջապատի վրա ու փոխել այն, հաղթահարել խոչընդոտները:
2. *Հուզականություն:* Դրա մասին դատում են ըստ հուզածին ազդեցությունների նկատմամբ դրսևորած նրբազգայության, հուզական հակազդումների համար առիթներ գտնելու հակվածության: Հատկանշական են հեշտությունը, որով հույզերը արարքների դրդիչ ուժ են դառնում, ինչպես նաև արագությունը, որով կատարվում է հուզական մի վիճակի փոփոխումը մյուսով:
3. *Շարժիչային (մոտորային) առանձնահատկություններ:* Այս առանձնահատկությունները դրսևորվում են արագության, կտրուկության, ռիթմի, ամպլիտուդայի (տատանման մեծության) և մկանային շարժումների մի շարք այլ հատկանիշներում (դրանց մի մասը բնութագրում է նաև խոսքային մոտորիկան):

Խառնվածքի այդ արտահայտությունները մյուսներից ավելի հեշտ են ենթարկվում դիտարկումների և գնահատման: Հարկավոր է նաև հաշվի առնել, որ գոյություն ունեն խառնվածքի տարիքային առանձնահատկություններ. մանկական ամեն մի տարիք ունի ակտի-

վության, հուզականության և մոտորիկայի իր յուրահատկությունը: Այսպես, ցածր դպրոցական տարիքում ակտիվության բնորոշ գծերը հետաքրքրության առաջացման հեշտությունը, արտաքին ցանկացած գրգռիչի վրա ուշադրություն դարձնելու պարաստականությունը և կենտրոնացվածության վիճակի անբավարար տևողությունը կապված են երեխաների նյարդային համակարգի հարաբերական թուլության, զգայունության հետ: Այդ տարիքում և հուզականությունը և մոտորիկան, իհարկե, այլ են, քան, ասենք, դեռահաս կամ պատանեկական հասակում: Այս կամ այն խառնվածքի տիպի հատկանիշները երեխայի մոտ չեն կարող դիտվել նրա տարիքից կտրված, դրանք միշտ հանդես են գալիս համապատասխան «տարիքային ֆոնի» վրա:

Պետք չէ նաև մոռանալ, որ խառնվածքի սահմաններում երեխայի, ինչպես նաև չափահաս մարդու վարքի պատկերը կարող է որոշվել նրա դրսևորած հարաբերություններով, որոնք ժամանակավորապես քողարկում կամ փոփոխում են տվյալ խառնվածքի համար բնական կամ, ավելի ճիշտ, բնորոշ դրսևորումները: Այսպես, հակազդման ուժը, շարժունության և հավասարակշռության աստիճանը կախված են տվյալ անձին առաջադրվող խնդիրներից և այլ անձանց նկատմամբ ունեցած վերաբերմունքից, հետաքրքրություններից, պահանջմունքներից և կողմնորոշումներից:

Գործի նկատմամբ դրական վերաբերմունք ունենալու դեպքում, արագանում է աշխատանքի տեմպն ու ռիթմը, մարդն աշխատում է ավելի մեծ եռանդով, երկար ժամանակ չի հոգնում: Եվ, ընդհակառակը, բացասական վերաբերմունքի դեպքում դիտվում է աշխատանքի դանդաղեցված տեմպ, շուտ է վրա հասնում հոգնածության զգացումը, գործունեության տոնուսն ընկնում է: Առավել ցայտուն կերպով է բացահայտվում դինամիկայի և հուզականության կախվածությունը կյանքի տարբեր իրադարձությունների նկատմամբ անձի ունեցած վերաբերմունքից:

Չետևաբար, մարդու վարքը վերլուծելիս հարկավոր է հաշվի առնել ոչ միայն ժամանակավոր վիճակները, այլև կայուն հարաբերությունները, անձի բնավորությունն ընդհանրապես: Միայն նման պայմաններում կարելի է գնահատել համեմատության մեջ դրվող մարդկանց ուժը կամ թուլությունը, հավասարակշռվածությունը կամ շարժունությունը:

ԽԱՌՆՎԱԾՔ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱԴՅԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐՔԻ ԿՈՒՆՏՈՒՐԱ

Մարդու ընդհանուր կուլտուրան, նրա դաստիարակվածությունը ազդում են խառնվածքի դրսևորման վրա: Այս երկու գործոնները փոխկապակցված են: Այդ պատճառով խառնվածքի յուրաքանչյուր տիպը կարող է դրսևորվել ինչպես դրական, այնպես էլ բացասական հոգեբանական գծերում: Այսպես, կան մարդիկ, որոնք չեն ցանկանում զսպել իրենց հուզական վիճակը, զայրույթի, ուրախության, հուսահատության դրսևորումները և այլն: Մենք գիտենք, որ խուլերիկը եռանդուն է, կրքոտ և եթե նրա այդ հատկությունները ուղղված են արժանի նպատակների, ապա դրանք կարող են լինել շատ արժեքավոր, բայց անբավարար հավասարակշռությունը (հուզական և շարժողական) կարող է արտահայտվել պատշաճ դաստիարակության բացակայության դեպքում՝ անզսպվածության կտրուկության, կոպտության մշտական բռնկումների մեջ: Դեռ ավելին, որոշ մարդիկ լարում են իրենց, ի ցույց հանելով անզուսպ խառնվածքը, որպեսզի վախ առաջացնեն շրջապատում: Նման մարդիկ իրենց անզսպվածությունը, կոպտությունը, անտակտությունը կամ նույնիսկ խուլիզանությունը պատճառաբանում են նրանով, որ «նյարդային» են: Դրանք անկուլտուրական, անկիրթ մարդիկ են:

Մենք գիտենք նաև, որ աշխուժությունը, կարեկցանքը, հարցասիրությունը՝ արժեքավոր առանձնահատկություններ են: Բայց անբավարար դաստիարակության դեպքում դրանք կարող են հանգեցնել անհրաժեշտ կենտրոնացվածության բացակայության, մակերեսայնության, աշխատանքի մեջ ուժերը ցրելու հակվածության, ընկերության և սիրո մեջ անկայունության:

Զսպվածությունը, հանդարտությունը, շտապողականության բացակայությունը նույնպես արժեքավոր հատկություններ են: Բայց դաստիարակության անբարենպաստ պայմաններում դրանք կարող են մարդուն դարձնել հույլ, կյանքի որոշ դրվագների հանդեպ անտարբեր, երբեմն նույնիսկ անհոգի շրջապատի նկատմամբ:

Ոչ պակաս կարևոր հատկություններ են մելանխոլիկի զգացմունքների խորությունը և կայունությունը, հուզական նրբազգացությունը, բայց համապատասխան դաստիարակչական ազդեցությունների բացակայության դեպքում այդ տիպի ներկայացուցիչների մոտ կարող է զարգանալ իրենց սեփական ապրումների մեջ ամբողջովին

խորասուզվելու հակվածությունը, չափից ավելի ամոթխածությունը, հիվանդագին նեղացկոտությունը, լալկանությունը:

Հասկանալի է, որ խառնվածքի ելակետային նույն հատկությունները չեն կանխորոշում այն, թե ինչի կվերածվեն դրանք իրենց զարգացման ընթացքում՝ արժանիքների^օ, թե՞ թերությունների: Այդ պատճառով դաստիարակի խնդիրը ամենևին չպետք է կայանա նրանում, որ նա փորձի վերափոխել խառնվածքի մեկ տիպը մի այլ տիպով: Դա նաև անհնարին է: *Դաստիարակը սիստեմատիկ աշխատանքի միջոցով պետք է նպաստի յուրաքանչյուր խառնվածքի դրական կողմերի զարգացմանը և միաժամանակ օգնի ազատվելու այն բացասական մոմենտներից, որոնք կարող են կապված լինել տվյալ խառնվածքի հետ:* Կուլտուրան կայանում է նրանում, որ մարդը կառուցում է իր վարքը հասարակության մեջ ընդունված բարոյակա-նությանը համապատասխան: Դա նշանակում է, որ անձը պետք է հաշվի նստի ուրիշների հետ, հոգատարությամբ վերաբերվի իրեն շրջապատող մարդկանց, հնարավոր չափով խուսափի այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են խոցել նրանց: Դրա համար պետք է զուսպ լինել:

Հուզված խուլերիկը լիովին կարող է հավաքել իրեն (իհարկե, պատշաճ դաստիարակության դեպքում) և թույլ չտալ կոպտություններ մարդկանց հանդեպ: Նա կարող է շեղել իր ուշադրությունը մի այլ օբյեկտի վրա, կամ խուսափել սոհաճ իրադրություններից: Սե-լանխուլիկը կարող է ստիպել իրեն՝ չմատնվելու ո՛չ տագնապի, ո՛չ խուճապի, ո՛չ էլ վախի:

Հարկ է հիշեցնել, որ երբեմն խառնվածքին են վերագրում այն, ինչը պարզապես անդաստիարակության հետևանք է: Օրինակ, միշտ չէ, որ ինքնազսպվածության և ինքնատիրապետման բացակայու-թյունը վկայում է խուլերիկ խառնվածքի մասին, այն անբավարար դաստիարակության արդյունք է և կարող է լինել ցանկացած խառ-նվածքի դեպքում: Հետաքրքրությունների և հրապուրանքների փո-փոխման չափազանց մեծ դյուրինությունը, անզսպվածությունը, ան-տարբերությունը շրջապատի նկատմամբ, երկչոտությունը և այլ բա-ցասական հատկություններ ինչպես երեխայի, այնպես էլ չափահա-սի մոտ կարող են լինել ոչ թե խառնվածքի գծեր, այլ շրջապատող մարդկանց ազդեցության հետևանք՝ ցանկացած քմահաճույքի կա-տարում մեկ դեպքում, իսկ մյուսում՝ ավելորդ խստություն և ինքնու-րույնության ճնշում: Աշակերտը դպրոցում կարող է թվալ երկչոտ,

գրեթե անօգնական, ծայրահեղ մեղանխուլիկ, բայց իրականում չլինել այդպիսին: Նման վարքի պատճառը կարող է լինել, օրինակ, այն, որ նա ետ է մնացել ուսումնական առարկաներից, կամ որ նրա մոտ սխալ հարաբերություններ են ստեղծվել համադասարանցիների հետ:

Այսպիսով, վարքի կուլտուրան որոշվում է ինչպես վարքի բարոյականության սկզբունքների և նորմերի իմացությամբ, այնպես էլ բարոյական դաստիարակվածությամբ, մասնավորապես, վարքի կայուն սովորությունների և ձևերի առկայությամբ: Մարդիկ կարող են տարբեր խառնվածքներ ունենալ, բայց բարձր կուլտուրան է որոշում նրանց վարքի համաչափությունը և նրանց անձի նրբանկատությունն ու արժանապատվությունը:

Վերոշարադրյալից հետևում է, որ դաստիարակը պետք է գիտենա երեխաների խառնվածքի գծերը, քանի որ դա հնարավորություն կտա ավելի ճիշտ կերպով հասկանալ նրանց վարքի որոշ առանձնահատկությունները, անհրաժեշտաբար փոփոխելով դաստիարակչական ազդեցությունների եղանակները:

Փորձառու մանկավարժները գիտեն, որ խառնվածքի խուլերիկ գծեր ունեցող աշակերտները առավել հաջող են կատարում այն աշխատանքները, որոնց առանձին փուլերում պահանջվում է ուժերի մեծագույն լարում, իսկ որոշ այլ փուլերում՝ ոչ: Բայց խուլերիկը կարող է ժամանակի ընթացքում հարմարվել նաև աշխատանքի համաչափ ռիթմին: Հաջողությունը նրա համար անհրաժեշտ է ինչպես ուսումնական, այնպես էլ արտադրական գործունեության մեջ: Ուսման գործընթացում ուսուցիչը ստիպված է գրեթե մշտապես զսպել խուլերիկ խառնվածք ունեցող աշակերտին:

Ըստ որում կարևոր է սովորեցնել աշակերտին ինքնուրույն կերպով վերլուծել սեփական գործողությունները: Հարկավոր է նկատի ունենալ այն, որ խուլերիկ խառնվածքը, ավելի քան մյուսները, նպաստում է լարվածությանը՝ բարդ, պատասխանատու գործողությունների կատարման ժամանակ, որոնց ընթացքում թույլ են տրվում այս կամ այն անճշտությունները: Խուլերիկին հատուկ է վատ ինքնատիրապետումը: Անհաջողությունների դեպքում, որոնք ուսման և դաստիարակության շրջանում հազվադեպ չեն, նա կարող է ընդունել հապճեպ որոշումներ: Այդ պատճառով շատ կարևոր է խթանել և ամրացնել հաջողության հասնելու նրա վստահությունը: Ինքնատիրապետմանը, «ափից ելնող» զգացմունքների զսպմանը կարելի է

սովորեցնել, որևէ հանգիստ, ազդեցիկ դիտողությամբ, *ոչ մի դեպքում չհասնեացնելով աշակերտի արժանապատվությունը:*

Ընդհանրապես ուսուցչի հատուկ հոգսերի առարկան հանդիսանում են խոլերիկները և մելանխոլիկները: Առաջիններին պետք է սիստեմատիկ կերպով հետ պահել բուռն հակազդումներից, վարժեցնել զսպվածությամբ, ինքնատիրապետմանը, դաստիարակել աշխատանքը ավելի հանգիստ և համաչափ կատարելու սովորություն: Երկրորդների մոտ պետք է զարգացնել վստահություն իրենց ուժերի նկատմամբ, խրախուսել նրանց ակտիվությունը, պահանջել կատարել այնպիսի արարքներ, որոնք կապված են դժվարությունների հաղթահարման հետ: Թույլ նյարդային համակարգ ունեցող աշակերտները կարիք ունեն հստակ ռեժիմի և աշխատանքի որոշակի ռիթմի: Մելանխոլիկը միանգամայն հաջող կերպով կարող է աշխատել հանգիստ պայմաններում, որոնք նրանից չեն պահանջում արագ հակազդումներ և աշխատանքի բնույթի հաճախակի փոփոխում: Սակայն երկարատև ապրումներ ունենալով վիրավորանքների և ինքնասիրության չնչին «խայթոցների» կապակցությամբ, նա հաճախ շեղվում է բուռն աշխատանքից, անուշադրության հետևանքով թույլ տալով սխալներ: Այդ պատճառով էլ նա դանդաղորեն է մտնում ուսման կամ աշխատանքի նորմալ ռիթմի մեջ, և դա պահպանում է շատ կարճ ժամանակաընթացքում, ցուցաբերելով անտարբերություն և տրամադրության անկում: Աշխատանքային ռիթմը փոփոխական է: Աշխատանքի արդյունավետությունը կարող է բարձր լինել առույգ տրամադրության դեպքում և ցածր՝ վիատ տրամադրության ժամանակ: Այս ամենը պետք է հաշվի առնվի դաստիարակի կողմից:

Որոշ հետազոտողներ պնդում են, որ նույնիսկ մանկավարժի բացասական գնահատականը տարբեր կերպ է ազդում նույն նախասիրություններ, բայց տարբեր խառնվածքների ունեցող աշակերտների վրա: Պարզվում է, որ եթե ուժեղ նյարդային համակարգ ունեցող աշակերտի համար բացասական գնահատականը կարող է կատարել խթանիչի դեր, ապա թույլ տիպի նյարդային համակարգ ունեցող աշակերտի մոտ այդպիսի գնահատականից հետո նկատվում է ընկճվածություն, շփոթվածություն, սեփական ուժերի նկատմամբ հավատի կորուստ: Հասկանալի է, որ աշակերտների նման տարբեր հակազդումները պահանջում են նաև մանկավարժական տարբեր մարտավարություն (տակտիկա):

Ուսուցիչները գիտեն, որ դպրոցական դասացուցակի փոփո-

խումը, մեկ առարկայի փոխարինումը մյուսով խախտում է դասարանի նորմալ աշխատանքը: Որոշ աշակերտներ հեշտ և արագ են ընտելանում նման կարգի փոփոխություններին, իսկ որոշ աշակերտներ՝ դանդաղ: Նման փաստերը բացատրելիս պետք է նույնպես հաշվի առնել խառնվածքի տարբերությունները: Իներտություն ունեցող որոշ աշակերտները չեն կարող անմիջապես ներգրավվել նոր գործունեության մեջ, նրանց համար դժվար է անցնել աշխատանքի մի ձևից մի այլ ձևին, նույնիսկ նույն դասի ժամանակ (օրինակ, անցումը բացատրության ունկնդրումից գրելուն և այլն): Դրա հետ մեկտեղ բարձր շարժունության տեր աշակերտների մոտ գործունեության հաճախակի փոփոխությունները պահպանում են նրանց աշխատունակությունը դասերի ժամանակ:

Խուլերիկ խառնվածք ունեցող աշակերտներին անհրաժեշտ է սիստեմատիկ կերպով վարժեցնել զսպվածությանը, ինքնատիրապետմանը, դաստիարակել նրանց մոտ ավելի հանգիստ ու համաչափ աշխատանքի սովորություն: Մեկնախուլիկ խառնվածք ունեցող աշակերտների մոտ անհրաժեշտ է զարգացնել վստահություն իրենց ուժերի նկատմամբ, խրախուսել իրենց ակտիվությունը, պահանջել կատարել այնպիսի արարքներ, որոնք կապված են դժվարությունների հաղթահարման հետ: Թույլ նյարդային համակարգ ունեցող երեխաների համար անհրաժեշտ է հատուկ ռեժիմ և աշխատանքի որոշակի ռիթմ:

Վարքի և, մասնավորապես, խառնվածքի կարգավորման գործում հսկայական նշանակություն ունի կամքը: Կամային ակտիվությունը, որը ձևավորվում է այս կամ այն խառնվածքի հիմքի վրա, արտացոլում է նրա առանձնահատկությունները: Այսպես, ֆլեգմատիկ խառնվածքի հիմքի վրա ավելի շուտ կարող է ձևավորվել կամքի մեթոդական, բանական (ինտելեկտուալ) ձևը, խուլերիկ խառնվածքի հիման վրա կարող է ձևավորվել հուզական, պոռթկուն կամք: Մյուս կողմից, բնավորության կամային հատկությունները, իրենց հերթին, թույլ են տալիս տիրապետել խառնվածքի հատկություններին և կարգավորել նրա դրսևորումը գործունեության մեջ: Այսպես, դաստիարակության համապատասխան պայմաններում և թույլ տիպի նյարդային համակարգի դեպքում կարող է զարգանալ ուժեղ կամք և ընդհակառակն, ուժեղ տիպի նյարդային համակարգի դեպքում, «ջերմոցային» դաստիարակության պայմաններում կարող են առաջանալ անբավարար եռանդի և անօգնականության հատկանիշներ:

Ոչ բոլոր խոլերիկներն են վճռական և ոչ բոլոր սանգվիհիկները՝ կարեկից:

Այդպիսի հատկությունները պետք է ձևավորվեն դաստիարակության միջոցով, քանի որ փոխապայմանավորվածության գործընթացը կամքի և խառնվածքի զարգացման մեջ ոչ միշտ է ընթանում սահուն, հարթ ու հավասար: Խառնվածքի արմատացած բացասական հատկությունները ուշացնում են բնավորության կամային հատկությունների ձևավորումը: Նկատվում են խափանումներ: Հաճախ իմպուլսիվությունը հաղթում է բանական կամքին, մանավանդ կյանքի կրիտիկական պահին:

Ուստի, կամային հատկությունների ձևավորումը նախատեսում է նաև որոշակի ինքնակարգավորում, ինքնադաստիարակում: Աճող մարդուն անհրաժեշտ է աստիճանաբար սովորել գիտակցաբար կարգավորելու իր վարքը և գոծունեությունը: Տարբեր տիպի խառնվածքների ներկայացուցիչների մոտ դա կատարվում է տարբեր կերպ: Օրինակ, եթե խոլերիկին ավելի հեշտ է, քան ֆլեգմատիկին իր մեջ մշակել գործողությունների արագություն և եռանդունություն, ապա ֆլեգմատիկին ավելի հեշտ է, քան խոլերիկին մշակել զսպվածություն և սառնասրտություն: Խառնվածքը դրսևորվում է նրանում, որ այս կամ այն հոգեկան հատկությունները մշակելու համար տարբեր աշակերտներին անհրաժեշտ են տարբեր միջոցներ:

Կյանքի այլևայլ բնագավառներում՝ տանը, դպրոցում, հասարակական վայրերում և այլն, խառնվածքի գծերը կարող են դրսևորվել տարբեր չափով: Ձևավորվող դիրքորոշումների և սովորությունների ազդեցության տակ խառնվածքի որոշ դրսևորումներ կարող են սահմանափակվել, մտնել այս կամ այն հունի մեջ: Ամրապնդվող կամքը հնարավորություն է տալիս մարդուն զսպել և նույնիսկ «հանել» իր իմպուլսիվությունը, տիրապետել հուզմունքներին, աստիճանաբար նաև խառնվածքի հատկություններին և նույնիսկ համապատասխան հանգամանքներում դրանք ենթարկել իրեն: Հոգեկան գործընթացների դինամիկայի ներքին տիրապետումը համարվում է ավարտված, երբ նոր հոգեկան ռիթմը դառնում է սովորական և ի վերջո, բնական դինամիկան միաձուլվում է վարքի կամային ռիթմի հետ:

Այսպիսով, խառնվածքն ազդում է վարքի գծերի վրա, բայց չի կանխորոշում դրանք. առաջնակարգ նշանակություն ունեն դաստիարակչական ազդեցությունները և աճող մարդու հարաբերությունների ամբողջ համակարգը շրջապատող աշխարհի նկատմամբ:

Նյարդային համակարգի տիպը, խառնվածքը պետք է մշտապես նկատի ունենալ և հաշվի առնել: Բայց պետք է նաև գիտակցել, որ խառնվածքը, համենայնդեպս, ունի ստորադաս նշանակություն: Դրա գծերը, այսինքն հոգեկանի դինամիկական կողմի առանձնահատկությունները, լոկ նախադրյալներից մեկն են զարգացնելու անձի այն կարևոր հատկությունները, որոնք կազմում են մարդու քննվորությունը:

ԽԱՌՆՎԱԾՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բարձրագույն նյարդային գոլորտների և ստիպերի մեղմացում	Գրգռման և արգելակման նյարդային պրոցեսների բնութագիրը			Խառնվածքի տեսակը
	Ըստ ուժի	Ըստ հավասարակշռության	Ըստ շարժունության	
ուժեղ	իսկաասարակշռված	շարժուն	սամգլիցիկ	
անզուսպ	անհավասարակշռված	շարժուն	խլելիկ	
իներցի	իսկաասարակշռված	սակավաշարժ	ֆլեգմատիկ	
լիք	անհավասարակշռված	սակավաշարժ	մելանցիկ	

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ԽՆԴԻՐ 1

ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒՄ ԴԵԿԱՎԱՐԻ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (թեստի հատված)

Ձեր ուշադրությանն է ներկայացվում թեստի մի հատված՝ կադրերի հետ աշխատելու ուղղությամբ ղեկավարի ընդունակությունը որոշելու համար:

Ելման տվյալներ.

Օհանյան - դանդաղաշարժ, մտախոհ, կասկածամիտ, վիրավորվող, տանջվում է չնչին բաներից:

Պետրոսյան - անհավասարակշիռ, բռնկվող, հիշաչար, վիրավորվող, բոլոր ապրումները վերածում է գործողությունների, կոնֆլիկտներում ցուցաբերում է զայրույթ:

Սաֆարյան - դանդաղաշարժ, սառնասիրտ, մանրախնդիր, համառ, փոքր-ինչ պահպանողական, իր սովորություններին հավատարիմ:

Քոչարյան - ուրախ, ոչ նեղացկոտ, շարժուն, ոգևորվող, հակված է ավանտյուրիզմի (արկածախնդրության), լավատես:

Թեստը բաղկացած է կարճ առաջադրանքից, որի պատասխանները պետք է գրել, հաշվի առնելով ելման տվյալները: Պատասխանում պետք է նշել կամ ազգանուններից մեկը կամ էլ «յուրաքանչյուր» բառը:

1. Հիվանդ ընկերոջն այցելելը ավելի լավ է հանձնարարել...
2. Վերահսկողության խմբի մեջ ընդգրկել...
3. Լավ հաշվետվություն կարող է գրել...
4. Հորեյլանի կազմակերպումը կարող է հաջողությամբ կատարել...
5. Վթարի վերացմանը նպատակահարմար է ուղարկել ...
6. Կադրերի բաժնում աշխատանքի երաշխավորել ...
7. Գերադասելի է գործուղման ուղարկել ...
8. Ազնիվ կարող է լինել ...
9. Վատ ղեկավար կարող է լինել ...
10. Խուլերիկ ...
11. Ֆլեգմատիկ ...
12. Սանգվինիկ ...
13. Մելանխոլիկ ...

Նշել այն առանձնահատկությունները, որոնք բնութագրում են սանգիվնիկին, ֆլեգմատիկին, խոլերիկին և մելանխոլիկին:

Ա.1. Բարձր ակտիվություն, 2. երկարատև աշխատունակություն, 3. եռանդունություն, 4. զսպվածություն, 5. ոյուրաբորբոքություն, 6. շարժունություն, 7. համբերատարություն, 8. շարժումների և խոսքի դանդաղություն, 9. զգացմունքի և տրամադրության դանդաղ փոփոխում, 10. թույլ հուզական գրգռականություն, 11. հմտությունների արագ յուրացում և վերակառուցում, 12. աֆեկտություն, 13. շարժումների աղքատություն, 14. անբավարար ակտիվություն, 15. ալարկոտություն, 16. դիմաշարժի և մնջախաղի արտահայտչականություն, 17. լռակյացություն, 18. հիպերզգայունություն (հիպերսենսիտիվություն):

Բ. 1. Առույգ, բարձ տրամադրություն, 2. նոր պայմաններին արագ հարմարվելու ունակություն, 3. հմտությունների դանդաղ յուրացում և վերակառուցում, 4. անվստահություն սեփական ուժերի նկատմամբ, 5. բարձր հուզական գրգռականություն, 6. զսպվածություն, 7. դիմաշարժի միօրինակություն, 8. եռանդունություն, 9. շարժունություն, 10. ընկճվածություն, շփոթվածություն անհաջողությունների դեպքում, 11. զգացմունքների և հուզական վիճակների արագ առաջացում և փոփոխում, 12. փոքր ակտիվություն, 13. համբերատարություն, 14. խոսքի անարտահայտչություն, 15. հանդարտ, հանգիստ տրամադրություն, 16. հուզված վիճակ, 17. ուշադրության կենտրոնացվածություն:

1. Նշեցեք վարքի այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են խառնվածքով և այնպիսիք, որոնք պայմանավորված են դրդապատճառներով:

2. Ինչպիսի՞ հատկանիշներով դա կարելի է որոշել:

Խոլերիկ խառնվածք ունեցող բարձր նախադպրոցական տարիքի երեխաների մոտ աշխատանքային առաջադրանքների կատարման ժամանակ կարող են դրսևորվել վարքի հետևյալ առանձնահատկությունները.

ա) անուշադրությունը առաջադրանքի բացատրության ժամանակ, նույնիսկ այն դեպքում, երբ այն հետաքրքիր է.

բ) առանց բացատրությունը մինչև վերջ լսելու աշխատանքի ձեռնամուխ լինելը.

գ) անհաջողությունների ժամանակ տեղի ունեցող խափանումները, օրինակ, երբ երեխաները պատռում են տետրերը, թողնում են աշխատանքը՝ ինչ-որ մի բան չստացվելիս.

դ) վառ հետաքրքիր նյութ ունեցող նոր առաջադրանքների բացատրության ժամանակ ուշադիր հետևելը դաստիարակի ամեն մի շարժումին,

ե) մրցակցական բնույթի աշխատանքներում համբերության ցուցաբերումը, անհաջողությունների դեպքում համառությունը.

զ) միօրինակ աշխատանքում ցուցաբերվող շտապողականությունը, անփութությունը:

1. Որոշել, թե ի՞նչ է տեղի ունենում նկարագրված իրավիճակում (խառնվածքի փոփոխում և քողարկում, թե՞ գործունեության անհատական ոճ):

Ջուլիակուլիի - բազմահաստոցայինների աշխատանքը մեծ պահանջներ է ներկայացնում նյարդային գործընթացների շարժունությանը: Այսպես, օրինակ, ջուլիակուլիին հաճախ ստիպված է լինում փոխանցել ուշադրությունը մեկ հաստոցից մյուսը, արագորեն փոխել տարբեր գործողությունները և այլն: Կարելի է ենթադրել, որ իներտ նյարդային համակարգ ունեցող ջուլիակուլիին չի կարողանա կատարել նման առաջադրանքները, որոնք կապված են ուշադրության հաճախակի փոխանցման հետ: Սակայն, հետազոտության մեջ ստացվել են տվյալներ իներտ ջուլիակուլիի-բազմահաստոցայինի բարձր արտադրողականության մասին: Նրանց աշխատանքի եղանակները տարբերվում են շարժուն ջուլիակուլիիների գործունեության եղանակներից: Իներտ ջուլիակուլիիները մեծ ուշադրություն են դարձնում կանխարգելիչ եղանակներին. աշխատում են կանխել հնարավոր «արտակարգ դեպքերը», թելի հաստացումը, թելի կտրվելը և այլն, ջանում են աշխատել հանգիստ, համաչափ են պլանավորում և բաշխում աշխատանքը: Շարժուն ջուլիակուլիիներն առաջին հերթին ուշադրություն են դարձնում «շտապ աշխատանքների» (ըստ Ե.Ա. Կլիմովի):

Որոշել մարդու խառնվածքը՝ ըստ ճնրթված գլխարկին, նրա հակազդումի:



ԽԱՌՆՎԱԾՔԻ ՏԵՍԱԿԱՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՆՈՂ ՀՈՐԳԵԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոգեկան հատկություններ		Խառնվածքի տեսակները և դրանց հանապատասխանող բարձրագույն նյարդային գործունեության հատկություններ				մեխանիկ
		սամբվիմիկ	խղերիկ	Ֆլեգմատիկ	մեխանիկ	
1. Հոգեկան հակադրումների արագությունը և ուժը	արագություն	ուժեղ, հավասարակշռված, շարժուն	ուժեղ, ոչ հավասարակշռված, շարժուն, անգուսպ	ուժեղ, հավասարակշռված, իներտ	թույլ, ոչ հավասարակշռված, նյարդային գործընթացները սակավաշարժ	
	ուժ	միջին	չափ օր	մեծ	մեծ	
2. Էքստրավերտություն կամ ինտրոկերտություն		էքստրավերտ	էքստրավերտ	ինտրոկերտ	ինտրոկերտ	
3. Ճկունություն կամ անճկունություն (ռիգիդություն)		ճկուն	ճկուն	անճկուն	անճկուն	
4. Սենսիտիվություն, հուզական գրգռվածություն, հույզերի ուժ, նրանց էքսպրեսիան (արտահայտչությունը) և հուզական կայունությունը	գրգռվածություն	չափավոր	բարձր	բարձր	բարձր	
	ուժ	միջին	չափ օր	բարձր	մեծ	
	էքսպրեսիան և կայունությունը	չափավոր	բարձր	ցածր	բարձր	
	կայունություն	կայուն	անկայուն	չափ օր	չափ օր	

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- АНАНЬЕВ Б.Г. Некоторые вопросы изучения человека. "Человек и общество". Л., Изд-во ЛГУ, 1966.
- ВЕРХОШАНСКИЙ Ю.В. Основы специальной силовой подготовки в спорте. М., ФИС, 1970.
- ГОДФРУА Ж. Что такое психология. I и II т. М., Мир, 1996.
- ГУРЕВИЧ К.М. Профессиональная пригодность и основные свойства нервной системы. М., Наука, 1970.
- КЛИМОВ Е.А. Индивидуальный стиль деятельности в зависимости от типологических свойств нервной системы. Изд-во Казанского государственного университета, Казань, 1969.
- КОВАЛЕВ А.Г. Психология личности. 3-е изд. М., Просвещение, 1970, гл. X.
- КРЕТТИ Б. Психология в современном спорте. М., 1978.
- ЛЕЙТЕС Н.С. Опыт психологической характеристики темпераментов. Сборник "Типологические особенности высшей нервной деятельности человека". М., 1966.
- ЛЕОНОВ А., ЛЕБЕДЕВ В. Психологические особенности деятельности космонавтов. М., Наука, 1971.
- МЕРЛИН В.С. Очерк теории темперамента. Изд. 2-е. Пермь, 1973.
- НАЙДИФЕР Р. Психология соревнующегося спортсмена. М., ФИС, 1982.
- НАЛЧАДЖЯН А.А. Этническая характерология, Ереван, "Огебан", 2001.
- НЕБЫЛИЦЫН В.Д. Основные свойства нервной системы человека. М., Просвещение, 1966.
- Общая психология. (Под редакцией академика АПН СССР А.В. Петровского), М., 1986, с. 401-418.
- ПАВЛОВ И.П. Общие типы нервной деятельности животных и человека. Полн. собр. соч., т. III, кн. 2, М.-Л., Изд-во АН СССР, 1951.
- Психология индивидуальных различий. Тексты. М., Изд-во МГУ, 1982, с. 21-58.
- Психология и психоанализ характера. Хрестоматия по психологии и типологии характеров. Самара. Издательский Дом "Бахрах", 1997, с. 44-47, 174-325.
- РУСАЛОВ В.М. Предметный и коммуникативный аспекты темперамента человека. Психологический журнал. т. 10, №1, Изд-во "Наука", М., 1989.
- РУБИНШТЕЙН С.Л., Основы общей психологии, Изд. 2-е, М., 1946, с. 655-675.
- СТРЕЛЯУ Я., Роль темперамента в психическом развитии, М., Прогресс, 1982.

Стресс и тревоги в спорте. М., ФИС, 1983.

ТЕПЛОВ Б.М., Исследование свойств нервной системы как путь к изучению индивидуально-психологических различий. Избр. труды, М., Педагогика, 1985, т. 2, с. 137-168.

УАЙТСАЙД Р., О чем говорят лица. С-П., "Питер", 1997.

ФРЕЙД З. Психологические этюды. Минск, 1997, с. 156-178.

Хрестоматия по психологии. М., Просвещение, 1977, с. 320-338.

ՆԱԼՉԱԶՅԱՆ Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997.

ՇԱՔԱՐՅԱՆ Հր.Գ., Կեցության էությունը և տիպաբանությունը, Երևան, 1997.

Խառնվածք.....	3
Բարձրագույն նյարդային գործունեության տիպը և խառնվածքը.....	9
Խառնվածքների տիպաբանությունը.....	23
Նյարդային համակարգի հատկությունների ժամանակակից հետազոտությունները.....	26
Խառնվածքի դերը աշխատանքային և ուսումնական գործունեության մեջ.....	30
Շարժուն և իներտ տիպերը գործունեության մեջ.....	37
Խառնվածքը և անձի վիճակը.....	38
Գործունեություն և խառնվածք.....	39
Խառնվածքը և գործունեության անհատական ոճը.....	47
Խառնվածքը և դաստիարակության հիմնահարցերը.....	49
Խառնվածք, դաստիարակության առանձնահատկություններ և վարքի կուլտուրա.....	63
Դավելված.....	71
Գրականություն.....	77